

## Քալիֆորնիոյ Ծերակոյտը Եւս Գանչցաւ Լեռնային Ղարաբաղի Անկախութիւնը

ՄԴՀԿ Հայ Ամերիկան Խորհուրդի (ՀԱԽ) հրապարակած հաղորդագրութիւնը կը տեղեկացնէ որ, Օգոստոս 27-ի Քալիֆորնիոյ Նահանգային Ծերակոյտը 23-ի դէմ 0 ձայնով վաւերացուցած է թիւ 32 բանաձեւը, որ կու գայ ճանչնալու Լեռնային Ղարաբաղը որպէս անկախ պետութիւն:

Նահանգային Խորհրդարանի անդամ Մայք Կաթոյի (Դեմոկրատ, Լոս Անձելըսի շրջանէն) կողմէ ներկայացուած բանաձեւը Խորհրդարանի ստորին մարմինին կողմէ վաւերացուած էր անցեալ Մայիսին:

Ծերակոյտէն ներս բանաձեւի գլխաւոր մղիչ ուժը եղաւ ծերակուտական Քէվին Տը Լիոն (Դեմոկրատ, Լոս Անձելըսի շրջանէն):

Հայկական Յեղասպանութեան Բանաձեւ թիւ 32-ը անունը կրող փաստաթուղթը, կոչ կ'ընէ Միացեալ Նահանգներուն՝ Լեռնային Ղարաբաղը ճանչնալու որպէս անկախ պետութիւն, այս առթիւ օգտագործելով օրինակներ Ամերիկայի պատմութեանէն, որ միշտ կողմնակից եղած է ժողովուրդներու ինքնորոշման եւ ժողովուրդավարական անկախութեան:

## Հոկտեմբերի 10-ին Նախատեսուած է Լուծել Հայաստանի Եւրասիական Սիութեան Սիանալու Հարցը

Ղազախստանեան լրատուական աղբիւրներուն համաձայն, Մինսկի մէջ կայացած զազաթի ժողովէն յետոյ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը ղազախ լրագրողներուն հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ Հոկտեմբեր 10-ին Մինսկի մէջ պիտի հանդիպին Մաքսային Միուսթեան երկիրներու ղեկավարները, որու ընթացքին կը նախատեսուի լուծել Եւրասիական Տնտեսական Միութեան Հայաստանի եւ Ղրղզստանի անդամակցութեան հարցը:

Միւս կողմէ, Հայաստանի մօտ Ղազախստանի ղեսպան Ալիմդոս Բոգոմիլով «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարեց որ, Ղազախստան որեւէ առարկութիւն չունի Եւրասիական Միութեան Հայաստանի անդամակցութեան հարցով:

«Ղազախստանում շատ բարեհաճ են վերաբերում Հայաստանի անդամակցութեանը Եւրասիական Միութիւնը: Ղազախստանի նախագահը ստորագրել է այդ անդամակցութեան ճանապարհային քարտեզը, այնպէս որ որեւէ հակասութիւն եւ հակադրութիւն չկայ: Տեխնիկական գործընթացը ժամանակ է պահանջում: Նախ փաստաթղթերի համաձայնեցման փուլն էր, այժմ էլ Հայաստանի անդամակցութեան համաձայնագիրը պէտք է քննարկեն Միութեան հիմնադիրների կառավարութիւնները», - ըսած է ղեսպանը:

«Այս կարեւոր Բանաձեւի վաւերացումը անցաւ երկար ճանապարհ, որ սկսաւ անցեալ Յունուարին, երբ ներկայացուեցաւ Բանաձեւը: Մեծ աշխատանք տարինք Բանաձեւը առաջ մղելու համար եւ հպարտ ենք, որ Քալիֆորնիոյ Ծերակոյտը իմ կողքիս գտնուեցաւ, օգնելու համար Արցախի ժողովուրդին՝ համելու ազատութեան, անկախութեան եւ ժողովրդավարութեան», Բանաձեւի վաւերացումէն ետք յայտարարեց Խորհրդարանական Մայք Կաթո:

«Մեծապէս հրճուած ենք, որ Նահանգային Ծերակոյտը վաւերացուց Բանաձեւը», այս առթիւ յայտարարեց ՀԱԽ-ի ատենապետ Սեւակ Խաչատրեան, աւելցնելով, «Մեր նահանգի ներկայացուցիչները ճանչցան եւ ընդունեցին, որ Արցախի ժողովուրդը իրաւունք ունի ինքնորոշման եւ կը յարգէ ժողովրդավարութիւնն ու ազատութիւնը: Այսօր, այս է որ փաստեցին անոնք՝ քուէարկելով թիւ 32 բանաձեւին ի նպաստ»:

Այսպիսով Քալիֆորնիա կը դառնայ ամենէն բազմամարդ կառավարական մարմինը, որ կը ճանչնայ Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը:

Այն դիտարկման, թէ այդ պարագային ինչու Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւ Ատտանայի մէջ ընթացեց Ատրպէյճանի առաջնորդ Իլհամ Ալիեւի նամակը, որ կ'առնչուէր Լեռնային Ղարաբաղին՝ յայտարարելով, թէ իրենք կը ստորագրէ Հայաստանի անդամակցութեան ճանապարհային քարտեզը կցելով անոր յատուկ կարծիք, Ղազախստանի ղեսպանը դիտել տուաւ, որ փաստաթուղթը այնուհանդերձ ստորագրուած է առանց այդ կարծիքին. - «Գազաթաժողովն անցկացուած էր Ատտանայում, եւ համակարգողը, բնականաբար, Ղազախստանի նախագահն էր, դրա համար էլ նա էր ստացել նամակը: Ես չգիտեմ Սերժ Սարգսեանը գիտէ՞ր այդ նամակի մասին, թէ՞ ոչ, բայց նամակներ կարող են ուղարկուել տարբեր պետութիւնների կողմից եւ թէ ինչու հենց Նազարբաեւն ընթացեց այն, արդէն սասցի՛ Ատտանայում անցկացուող գազաթաժողովի համակարգողը Ղազախստանի նախագահն էր»:

## Սերժ Սարգսեան Համաձայն Չէ Արտագաղթի Մասին Հնչոյ Մտահոգութիւններուն Իհտ



Բանակումի ընթացքին Սերժ Սարգսեան կը պատասխանէ երիտասարդ լրագրողներու հարցերուն

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան ներկայ գտնուելով «Բազէ-2014» երիտասարդական բանակումի փակման արարողութեան, պատասխանած է լրագրողներու ջոկատի անդամներու հարցերուն, պաշտպանելով իր եւ իր կառավարութեան վարած ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը միաժամանակ քննադատելով ընդդիմադրութեան պահուածքը:

Սերժ Սարգսեանը չէ համաձայնած երիտասարդ լրագրողներէն մէկուն այ դիտարկման, թէ «արտագաղթը ահապահուած է»՝ նման պնդումները որակելով «ենթադրութիւններ»: Նախագահը կարծիք յայտնած է, որ 90-ական թուականներուն է արտագաղթը «շատ-շատ մեծ» եղած է:

«Մենք ունենք վիճվարչութիւն, որը շատ յստակօրէն բոլոր թիւերը տալիս է, անցեալ տարի կրճատուել է, եւ այս տարուայ թիւերը խօսում են այն մասին, որ այս տարի էլ աւելի է կրճատուելու: Ահապահուալը ո՞րն է: Գիտէք, ահապահուալը ջրի հոսքի մասին են ասում, երբ որ հեղեղ է սկսուած, մի առու է լինում, յետոյ այդ առուն դէտի է վերածուում, ահապահուալը ես այդպէս եմ հասկանում հայերէնով: Կը գնաք, կը բացէք վիճվարչութեան թիւերը, կը նայէք 90-ական թուականներին շատ-շատ մեծ էր արտագաղթը: Եթէ ձեզնից մէկը փորձի աւելի

աւազներին հարցնել, թէ 1993-94 թուականներին ինչ վիճակ էր, որ հետաքրքրուած էք Ձեր բարեկամով եւ ծանօթներով, մի հատ էլ հետաքրքրուէք տեսէք՝ իրենց բարեկամները, ծանօթներն ի՞նչ էին այն ժամանակ կարծում. բոլորին թւում էր, թէ Հայաստանում մարդ չի մնացել», - յայտարարած Սարգսեան, նաեւ չհամաձայնելով, որ մարդիկ կը մեկնին աշխատանք չունենալու, գործազրկութեան կամ վիրաւորանքի պատճառով:

«Ոչ, ես համաձայն չեմ, եւ ես համարում եմ, որ մարդիկ, ովքեր գնում են Հայաստանից, ճշող մեծամասնութեամբ գնում են այն պայմանների հետեւից, որոնց ձգտում են», - ըսած է նախագահը:

Անդրադառնալով ընդդիմադիրներու քննադատութիւններուն թիրախ եղող յատկապէս ստուերային տեսութեան դէմ պայքարի, Սերժ Սարգսեանը «շատ ճիշդ» նկատած է վարչապետ Յովիկ Աբրահամեանի խօսքերուն հետ, որ չկայ «կախարդական փայտիկ» շատ կարճ ժամանակի ընթացքին ինդիւրները լուծելու համար, միաժամանակ ան համաձայն չէ շատ ը տնտեսագէտներու այն հաշուարկներուն հետ, որ ստուերային տնտեսութիւնը Հայաստանում չի կարողանում զարգանալ:

Շաբ.ը էջ 5

## Նալբանդեան Մասնակցեցաւ Թուրքիոյ Նախագահի Երդման Արարողութեան

Օգոստոսի 28-ին կայանալիք Թուրքիոյ նորընտիր նախագահի Ռէճէփ Էրտողանի երդման արարողութեան մասնակցելու նպատակով Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան մեկնեցաւ Անգարա:

Այս մասին նախապէս տեղեկացուցած էր Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան մամուլի ծառայութիւնը:

Թուրքիոյ նախագահի երդման արարողութեան մասնակցելու հրաւերը յղուած էր Հայաստանի նախագահին: Այս կապակցութեամբ թուրքագէտ Վահրամ Տէր-Մաթեոսեան «Թերթ» ինթըրնետային կայքին յայտնած է որ, այս երեւոյթը պէտք է առանձնացնել հայ-թրքական դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման փորձերու ու նախաձեռնութիւններու համադրութեան: Այս հրաւերը, ըստ թուրքագէտի, Անգարայի իւրաքանչեւ շնորհակալութիւնն էր՝ ի պատասխան Սերժ Սարգսեանի շնորհաւորական ուղերձին եւ կապ չունի Սերժ Սարգսեանի, Թուրքիոյ նախագահին յղած՝ Յեղասպանութեան 100-ամեակին մասնակցելու հրաւերին հետ:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազատամարտիկները Մեկ Ամիս Ժամանակ Տուեցին Իշխանութիւններին

Ազատամարտիկները մինչև Սեպտեմբերի վերջ ուղղակի ժամանակ են տալիս իշխանութիւններին: Այս մասին այսօր՝ օգոստոսի 26-ին, Արցախում կուռած ջոկատների շուրջ չորս տասնեակ հրամանատարների, պահեստագորային սպաների հիմնադրած Ազատամարտիկների դաշինքի հիմնադիր ժողովում յայտարարեցին ազատամարտիկները՝ նշելով, որ իրենց միառուրել է առկայ արտաքին մարտահրաւէրներին դիմակայելու անհրաժեշտութիւնը եւ ինքնիշխանութեան հարաւոր կորստի վտանգի առկայութիւնը:

«Մինչև սեպտեմբերի վերջ ժամանակ ենք տալիս: Կամ թող ուղղուեն, կամ գնան, բայց թալանը թողնեն, նոր գնան», - ասաց Ապարանի ջոկատի հրամանատար Ռազմիկ Պետրոսեանը:

Ազատամարտիկներին վրդովեցրել էր իշխանութիւնների այցերը շփման գիծ, որը նրանք անուանեցին «իրենք իրենց հերոսացնելուն ուղղուած PR ակցիա»:

«Մենք ասել ենք, որ եթէ պատերազմ եղաւ, մենք կամաւորական խմբեր կը կազմենք, կը գնանք: Ես ասում էի՝ հայէս մի ասէք, ասէք՝ իշխանաւորներին էլ իրենց երեխաների հետ տանելու ենք: Էսօր, երբ մեր էրեխեքը կարողացան հպարտութեամբ թուրքի երախը պահել, սրանք երբ տեսան այս վիճակը, իրենց կամուֆլյաժները հագան, գնացին նկարուելու», - ասաց Ռազմիկ Պետրոսեանը:

Պահեստագորի գնդապետ Սամուէլ Յովսէփեանն էլ (Աղմիրալ

Սամօ) նշեց, որ դիրքեր բարձրանալու փոխարէն Հովիկ Աբրահամեանն աւելի լաւ է՝ այնպիսի երկիր ստեղծի, որտեղ զինուորի ընտանիքը ոչ մի բանի կարիք չի գգայ եւ ազատամարտիկների որդիներն էլ ստիպուած չեն լինի արտագնայ աշխատանքի մեկնել իրենց ընտանիքը պահելու համար:

Ազատամարտիկների խօսքով՝ նման թոյլ իշխանութիւն անկախ Հայաստանում դեռ չի եղել. այս իշխանութեան օրօք պետութեան ունեցուածքը դարձել է 6 հոգու սեփականութիւնը: Այնուամենայնիւ, ըստ Սամուէլ Յովսէփեանի, իրենք գտել են պատմութիւնը ճիշդ ուղու վրայ դնելու մեխանիզմը:

«Որքան էլ Ջորի Բայթեանը նախագահներին հերոսացնի, չեն կարողանալու: Մենք գտել ենք մի մեխանիզմ, թէ ոնց ճիշդ պատմութիւնը գնենք տեղը»:

NEWS.am-ի թղթակիցը հաղորդում է, որ համագումարին ներկայ էին «Արաբօ» ջոկատի հրամանատար Մանուէլ Եղիազարեանը, «Սեւ Հովազ» ջոկատի հրամանատար, ԱԺ ԲՀԿ պազամաւոր Ռուստամ Գասպարեանը, «Դաշտային ազատամարտիկներին» ներկայացուցիչ Սուրէն Սարգսեանը, «Մարտական խաչի» ասպետ, փոխգնդապետ Սաչիկ Աւետիսեանը եւ այլք:

Ազատամարտիկների դաշինքի առաջին մարզային շտաբը վաղուանից կը գործի Արմաւիրում: Դաշինքը պատրաստուած է գործունէութիւն ծաւալել բոլոր մարզերում:

Հանրապետական. «Իշխանութիւնը Չի Կարող Չիջումների Գնալ»

Ոչ իշխանական քաղաքական ուժերի քառակի (ԲՀԿ, ՀՅԴ, ՀԱԿ եւ «Ժառանգութիւն») կողմից առաջարկուած 12 կէտերում կան պահանջներ, որոնց շուրջ իշխանութիւնը չի կարող գիշումների գնալ: Այդ մասին այսօր՝ օգոստոսի 25-ին, մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց Ազգային ժողովի Հանրապետական խմբակցութեան պատգամաւոր Մկրտիչ Մինասեանը:

Պատգամաւորի համոզմամբ՝ անընդունելի է, երբ խօսում են վերջնագրի լեզուով: «Այսինքն վերջնագրի տեսքով բանակցութիւններ վարելը անհնար է», - ընդգծեց Մկրտիչ Մինասեանը: Ի պատասխան «Բարգաւաճ Հայաստանի» եւ «Հայ ազգային կոնգրէսի» միջեւ որոշակի տարաձայնութիւնների մասին հարցին՝ պատգամաւորը յայտարարեց. «Մենք յստակ գիտենք, որ քաղաքական ուժերը բաւականին տարբեր քաղաքական մօտեցումներ ունեն, ուստի նորմալ է, որ նշուած ուժերի մէջ կարող են լինել նաեւ տարաձայնութիւններ»:

Անդրադառնալով խօսակցութիւններին, որ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը դէմ է վերադառնալ իշխող կուսիցիա՝ Մկրտիչեանը նկատեց, որ այդ մասին տեղեկացուած չէ: «Սակայն մենք միշտ ասել ենք, որ երկրի առջեւ ծառայած ինդիւստրիալ առաւելարդիւնաւէտ լուծման նպատակով մեզ հետ համագործակցել ցանկացողների առաջ մեր դռները բաց են», - ասաց Մկրտիչ Մինասեանը: Այն, որ իշխանութեան եւ ընդդիմադիր ուժերի մէջ տարաձայնութիւններ կան, նոյնպէս բնական է: «Սակայն անընդունելի է, որ ընդ-



Հանրապետական խմբակցութեան պատգամաւոր Մկրտիչ Մինասեան

դիմութիւնը առաջարկութիւններ ներկայացնելու փոխարէն, թշնամական դիրքեր է զբաղեցնում», - նշեց պատգամաւորը: Մինասեանի խօսքով՝ աշնանը որոշակի քաղաքական ակտիւութիւն կը նկատուի, սակայն ներքաղաքական դաշտը, այդքան թէ՛ չի լինի:

Յիշեցնենք, որ քառակն իր կէտերը հրապարակել է Յունիսի 10-ին եւ մինչև սեպտեմբերի աւարտը ժամանակ տուել իշխանութիւններին՝ պահանջները կատարելու համար:

Այդ կէտերը վերաբերում են կուսակային կենսաթոշակային համակարգին, շրջանառութեան հարկին, կարմիր գծանշումներին, գիւղմթերքի արտադրութեանը, «Նաիրիտ» գործարանին, «Որոտան» Հէկ-երի համալիրի գոյքի վաճառքին, տրանսպորտի թանկացմանը, 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին:

Նշուած ժամանակը լրանալուց լետոյ նշուած ուժերը նախատեսում են համահանրապետական համատեղ ցոյց անցկացնել:

Կոմանդոսն Առաջարկում Է Կանխարգելիչ Հարուած Հասցնել Ադրբեյջանի Դիրքերին

Եկել է ժամանակը, որպէսզի հայկական կողմը հասկանայ՝ որքան ուժեղ է եւ չսպասի իր վրայ յարձակուելուն, այլ ինքը հարուած հասցնի Ադրբեյջանին: Այս մասին օգոստոսի 26-ի մամուլ ասուլիսում յայտարարել է Արցախեան պատերազմի հերոս, գեներալ -լէյտենանտ Արկաղի Տէր-Թադեւոսեանը՝ Կոմանդոսը:

«Մենք կանխարգելիչ հարուած հասցնելու հիմնալի պայմաններ ունենք: Այս գաղափարը չի ողջունում, մարդկային կեանքերի հետ է կապուած, սակայն մենք չենք կարող թոյլ տալ, որ մեզ վրայ յարձակուեն, մենք էլ ամբողջ ժամանակ պաշտպանուենք: Եթէ մենք հարուած չհասցնենք, ադրբեյջանական կողմն անընդհատ լարուածութեան մէջ կը պահի մեզ», - նշել է Արկաղի Տէր-Թադեւոսեանը: Կոմանդոսը բացատրել է, որ խօսքը պատերազմական գործողութիւններ սկսելու մասին չէ, այլ կան-



Արցախեան պատերազմի հերոս Արկաղի Տէր-Թադեւոսեան

խարգելիչ հարուածներ հասցնելու: «Ադրբեյջանական զօրքերը պատրաստ չեն ռազմական գործողութիւնների, նման գնահատական ՆԱՏՕ-ի մասնագէտներն են տալիս: Նախագահ Իլհամ Ալիեւն արհեստական լարուածութիւն է ստեղծում սահմանին», - յաւելել է Արկաղի Տէր-Թադեւոսեանը:

համար». Ռուբիկ Յակոբեանը հակադարձեց. - «Էդ փայտիկը, որ լաւ փնտուեն, կը գտնեն, որովհետեւ այդ փայտիկն իրենց կողքին դրուած է:

«Մենք, որպէս «Ժառանգութիւն», պահանջելու ենք ամբողջական իշխանափոխութիւն՝ օրուայ իշխանութիւններին հետ միասին: Մենք տեղ չունենք այլեւս գնալու. իշխանութիւնը ցոյց է տալիս, որ ինքն ազեկվատ չէ, չի

Ռուբիկ Յակոբեան. «Իշխանութիւնը Չունի Քաղաքական Կամք»

Իշխանութիւնները չեն կատարել քառակի 12 պահանջներից որեւէ մէկը, եւ քառակը արդէն պարտաւոր է նախագահի հրաժարականի հարց բարձրացնել: Լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց «Ժառանգութիւն» խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Ռուբիկ Յակոբեանը՝ պատասխանելով «Ազատութեան» հարցին:

Ազգային ժողովի ոչ իշխանական չորս ուժերը՝ «Բարգաւաճ Հայաստան», «Հայ ազգային կոնգրէս», «Հայ եղափոխական դաշնակցութիւն» եւ «Ժառանգութիւն», Յունիսի սկզբին ներկայացրեցին 12 կէտից բաղկացած իրենց պահանջներն ու կառավարութեանը ժամանակ տուեցին մինչև սեպտեմբերի վերջն իրագործել դրանք:

Դրանցում ոչ նախագահ Սերժ Սարգսեանի, ոչ էլ վարչապետ Յովիկ Աբրահամեանի հրաժարականի պահանջ չկար: Պահանջներն, առաւելապէս, վերաբերում էին տնտեսական մենաշնորհների վերացմանը, հարկային ու մաքսային ոլորտներին, 100 տոկոս համամասնական ընտրակարգի անցմանը:

«Ես կարծում եմ, որ ընդհանրապէս ոչինչ չի կատարուել. ճիշդ է, եթէ լինում էք, երբ քառակը նոր-նոր յայտարարեց, իշխանութեան ոչ երկրորդական դէմքերը յայտարարեցին՝ «ինչ հրաշալի ընդդիմութիւն ունենք, ինչ կառուցողական ընդդիմութիւն է, տեսէք՝ ինչ հրաշալի կէտեր են

առաջարկել եւ դրանք անպայման կիրականացնենք ընդդիմութեան հետ միասին»: Անկեղծ ասած, հումոր չի սա, ինձ թուած էր՝ չեն կարողացել: Յետոյ Սերժ Սարգսեանն ու Դաւիթ Յարութիւնեանը կարողացին, յայտարարեցին՝ «Ինչ էք ասում, էս կէտերն ո՞վ կ'իրականացնի», - ասաց Յակոբեանը:

Նրա խօսքով, եթէ իշխանութիւնը հրաժարուի 41 մեծամասնական մանդատից, ապա յաջորդ ընտրութեան ժամանակ իշխանութիւնը միանգամից կը վերանայ. - «Պատկերացրէք, որ իշխանութիւնը համաձայնի լծակներ տալ վերահսկիչ ընդդիմութեանը, յաջորդ անգամ իտհանոց կը բացայտուի, եւ կը տեսնենք, որ 701 միլիարդ դրամ ռիսկային, ինչպէս վերահսկիչ պալատը ներկայացրեց, այդ ամբողջ բիւջէի 70 տոկոսը իսկապէս դրուած է փակ սենեակում, եւ ամէն մէկն իր մուսկուլների, իր դաստիարակութեան չափով ուղղակի ատկատ է անում դրանից: Բնականաբար, նրանք չեն տա վերահսկողական լծակներ: Այսինքն՝ դրանք կէտեր են, որոնք երբ ամսում կարող էին իրականացուել, բայց մի յստակ գործօնի պատճառով չիրականացրեցին. իշխանութիւնը չունի քաղաքական կամք, կոսմետիկ այդ յայտարարութիւններին չեմ անդրադառնում», - ասաց Յակոբեանը:

Վարչապետ Հովիկ Աբրահամեանի օրերս արած յայտարարութեանը, թէ «կախարդական փայտիկ չունի» ստուերը կարճ ժամանակում հարկային դաշտ բերելու

գնահատում իրավիճակը, եւ մենք պարտաւոր ենք հրաժարականի հարցը բարձրացնել», - ասաց Յակոբեանը:

«Շատ կարեւորելով քառակն բոլոր չորս ուժերի համախմբուածութիւնը: Եթէ չորս քաղաքական ուժերի լիդերներն իրենց թիմակիցներին հետ անկեղծօրէն կանգնեն հրապարակում եւ գնան իշխանափոխութեան, իշխանափոխութիւնը օրերի ինդիւր կը լինի»:

# ԼՈՒՐԵՐ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը Դատապարտել է Իրաքի Եզդիների Հանդէպ Բռնութիւնները

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը գորակցութեան գիր է յղել համայն եզդիների հոգեւոր առաջնորդ Նորին Սուրբ Մեծութիւն Միրէ-Միրա Թահսիմ Բեգին, որը վերջինիս փոխանցուել է Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Աւագ արքեպիսկոպոս Ասատուրեանի միջոցով:



Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս

«Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ցաւակցութիւններն ենք յղում Ձեզ այս օրերին Իրաքում եզդի ազգաբնակչութեան նկատմամբ տեղի ունեցող զանգուածային կոտորածների կապակցութեամբ: Մենք խորապէս անհանգստացած ենք Իրաքի հիւսիսային շրջաններում իրականացուող անմարդկային բռնութիւնների եւ դրանց հետեւանքով բազմաթիւ զոհերի առնչութեամբ», - ասուած է վեհափառ Հայրապետի գրութեան մէջ:

Խստորէն դատապարտելով եզդի ժողովրդի դէմ իրագործուող ջարդերն ու բռնութիւնները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահութիւն է յայտնել, որ բազմադարեայ պատմութիւն ունեցող եզդի ժողովուրդը կը ստկայ եւ կը

յաղթահարի իր առջեւ ծառայած այս փորձութիւնը: Նորին Սրբութիւնը նաեւ կոչ է արել միջազգային հանրութեանն ու կազմակերպութիւններին անյապաղ քայլեր ձեռնարկել դադարեցնելու համար եզդիների ջարդերը Իրաքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթել է, որ պէսզի վերահաստատուի խաղաղութիւնը Իրաքում եւ Իրաքի աստուածասէր ժողովուրդը շարունակի իր խաղաղ կեանքը հայրենի օջախներում:

## Թուրքական Մամուլում Աւելացել Են Հակահայկական Հրապարակումները

Թուրքական մամուլում այլատեսացութեան եւ խտրականութեան ուսումնասիրութեան աշխատանքների շրջանակներում հերթական գեկոյցն է հրապարակուել:

Թուրքական Haberdar կայքի փոխանցմամբ՝ 2014-ի Յունուար-ապրիլ ամիսներին իրականացուած ուսումնասիրութեան արդիւնքներով թուրքական մամուլում այլատեսացութեան թիրախում ամենաշատը կրկին հայերն են յայտնուել:

Հայերից յետոյ ցուցակի երկրորդ տեղում է հրեաներն են, որոնց յաջորդում են քրիստոնեաների նկատմամբ ատելութիւն սերմանող

նիւթերը, իսկ յոյները եւ քրդերը եզրափակում են հնգեակը:

Հայերի եւ միւս ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ թշնամանք եւ ատելութիւն սերմանող նյութերի քանակով անվիճելի առաջատարն է Yeni Akit պարբերականը, որին հետեւում է Milli Gazete-ն եւ Takvim-ը:

Նշուած ժամանակահատուածում էթնիկ խմբերի, ազգերի եւ կրօնական խմբերի դէմ թշնամանք եւ ատելութիւն սերմանող հրապարակումները կազմել են 188, ինչը գերազանցում է նախորդ տարիներ հրապարակումների թիւը:

## Իրաքանջիւր 4-րդ Ռուսաստանցի Ղարաբաղը Համարում Է Անկախ Պետութիւն

Ռուսների մօտ 24%-ը Լեւոնային Ղարաբաղը համարում է անկախ պետութիւն: Այդ մասին վկայում են Հասարակական կարծիքի ուսումնասիրութեան համաուսական կենտրոնի կողմից անցկացուած հարցման արդիւնքները:

Բացի այդ, հարցուածների 11%-ը ենթադրում է, որ տուեալ տարածքը Հայաստանի մաս է կազմում, 9%-ը՝ Ադրբեջանի: Հարցուածների 53%-ը դժուարացել է պատասխանել հարցին:

Հետազոտութիւնը նաեւ ցոյց է տուել, որ ռուսների 56%-ը կողմ է դարբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը եւ միայն հարցուածների 14%-ը կարծում է, որ այս հարցը չի կարելի լուծել

առանց գէնքի: 30%-ը հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ սեփական դիրքորոշում դեռեւս չունի:

Ընդ որում, հարցուածների 45%-ին յայտնի է մէկ ամիս առաջ հակամարտութեան դադարում սրացած իրավիճակը, 10%-ը իրավիճակի մասին մանրամասն տեղեկութիւններ ունեն, իսկ 35%-ը միայն լսել է լարուածութեան մասին, սակայն մանրամասններին չի տիրապետում:

Բացի այդ, հարցուածների 52%-ը դարբաղեան հակամարտութեան դադարում սրացած իրավիճակի մասին առաջին լսում են հարցումը անցկացնելու ժամանակ:

## «Freedom House»-ը Կոչ է Արել Պատասխանատուութեան Ենթարկել Ալիեւին

Լրագրող Իլգար Նասիբովի հանդէպ դաժան յարձակումն Ադրբեջանում մարդու իրաւունքների իրավիճակի արագ ու արմատական վատթարացման վերջին կաթիլն է: Այդ մասին յայտարարել է «Freedom House» կազմակերպութեան նախագահ Դեւիդ Քրամերը՝ ի պատասխան ադրբեջանցի լրագրող եւ իրաւապաշտպան Իլգար Նասիբովի դէմ կատարուած վայրենի յարձակման:

«Ինչպէս երեւում է, Ադրբեջանի կառավարութիւնը վճռական է տրամադրուած մարդու իրաւունքների մարտիկներին եւ իր գործողութիւնները քննադատողներին հաւաքակալութեամբ համար, ինչպէս որ տեղի ունեցաւ օգոստոսի 21-ին Նասիբովի հետ: Նախագահ Իլհամ Ալիեւը սխալուած է, եթէ կարծում

է, թէ կառավարութիւնն անհետեւանք կարող է հետապնդել իրեն քննադատողներին, այն ժամանակ, երբ ողջ աշխարհի ուշադրութիւնը կենտրոնացած է այլ թէժ կէտերում», - նշել է Քրամերը:

Նրա խօսքով՝ Ալիեւն ու իր կառավարութիւնը պէտք է պատասխանատուութեան ենթարկուեն թշնամական միջավայրի համար, որը պաշտպանում են: «Միացեալ Նահանգներն ու Եւրոպական միութիւնը պէտք է դիտարկեն այն պաշտօնեաների նկատմամբ պատժամիջոցների հարցը, որոնք թոյլ են տալիս կամ իրագործում են այդ արտափելի շարաշահումները», - յաւելել է «Freedom House» կազմակերպութեան նախագահ Դեւիդ Քրամերը:

## ԱՄՆ Նախագահն ու պետքարտուղարը պէտք է անմիջական մասնակցութիւն ունենան ԼՂ խնդրի կարգաւորմանը.

Միացեալ Նահանգները պէտք է աւելացնի ԼՂ խնդրի շուրջ բանակցային գործընթացում առաջընթացի համեմատ ուղղութեամբ տարուող քաղաքական ջանքերը: Ինչպէս յայտնում է ադրբեջանական ԱՊԱ գործակալութիւնը, այս մասին յայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ նախկին դեսպան Մեթիլու Բրայզան:

Նա յաւելել է, որ բանակցութիւններին իրենց անմիջական մասնակցութիւնը պէտք է ունենան նաեւ

նախագահ Բարաք Օբաման ու պետքարտուղար Ջոն Քերին:

Բրայզան յայտնել է, որ ԼՂ խնդրի լուծմամբ զբաղուող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները՝ ԱՄՆ-ն, Ֆրանսիան եւ Ռուսաստանը, միաժամանակ նաեւ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի անդամներ են, ինչն էլ, ըստ նրա, կարող է հանգեցնել ԼՂ-ի վերաբերեալ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի ընդունած չորս բանաձեւերի պահանջների կատարմանը:

Թարկուելու հետ: «Սակայն հիմամենք ունենք որոշակի իրական ուղղութիւններ, որոնց շրջանակում այս

համագործակցութիւնը տեղի է ունենում եւ չի ենթարկուած վերանայման», - յաւելել է քաղաքագետը:

## Ռուսաստան-ՆԱՏՕ Յարաբերութիւնների Սրացումը Հետագայում Կարող Է Որոշակի Անդրադարձ Ունենալ Հայաստանի Վրայ

Քաղաքագէտ Ալեքսանդր Մարգարովը գտնում է, որ Ռուսաստանին ՆԱՏՕ-ի գազաթնափողովին չհրաւիրելու որոշումը Ռուսաստանի հետ փոխգործակցութեան կասեցման տրամաբանական շարունակութիւնն է. Ռուսաստանի մասնակցութիւնը նպատայարմար չեն համարել այդ հանդիպմանը:



Քաղաքագէտ Ալեքսանդր Մարգարով

Յիշեցնենք, որ ռուս դիւանագէտները չեն ստացել սեպտեմբերին կայանալիք ՆԱՏՕ-ի գազաթնափողովին մասնակցութեան հրաւեր, որտեղ կը քննարկուեն Ռուսաստանի հետ յարաբերութիւնները:

«Միաժամանակ՝ ՆԱՏՕ-ի համար ի յայտ է գալիս մէկ այլ խնդիր՝ նոր մօտեցումներ Ռուսաստանի հետ յարաբերութիւնների հարցում, եւ կոպիտ ասած՝ դա արդեն իրենց ներքին գործն է դառնում, թէ ինչպէս են նրանք տեսնում իրենց նոր տեսլականը: Հետաքրքիր է Մերկելի այն յայտարարութիւնը, որ ՆԱՏՕ-ն չի տեսնում ապագայում Ուկրաինան՝ որպէս ՆԱՏՕ-ի անդամ, եւ համապատասխանաբար խնդիրը վերաբերում է նրան, որ անհրաժեշտ է մտածել նոր մօտեցումներ ո՞ր միայն Ռուսաստանի հետ գործակցութիւնը շարունակելու հարցում, այլեւ՝ գուզահեռ ներկայացնելու այն տեսլականը, որը վերաբերում է այնպիսի երկրներին, ինչպիսին Ուկրաինան է եւ Վրաստանն են», - ասաց քաղաքագէտը:

Հարցին, թէ այս երկու բեւեռի յարաբերութիւնների սրումը կարո՞ղ է հանգեցնել նրան, որ Ռուսաստանը ճնշում գործադրի Հայաստանի վրայ, որպէսզի Հայաստանը դադարեցնի համագործակցութիւնը ՆԱՏՕ-ի հետ՝ հաշուի առնելով, որ մենք ՀԱՊԿ անդամ ենք, Ալեքսանդր Մարգարովը պատասխանեց. «Հայաստանն ունի իր համագործակցութեան ծրագիրը ՆԱՏՕ-ի հետ, եւ այն վերաբերում է որոշակի բարեփոխումների՝ բանակային կորպուսի շրջանա-

կում: Այդ համագործակցութիւնը չի կրում անմիջական ռազմական բնոյթ, այլ վերաբերում է բազմաֆորմատ համագործակցութեանը, որն այս պարագայում ամենայն հաւանականութեամբ՝ կը շարունակուի: Ինչ վերաբերում է Հայաստանի անդամակցութեանը ՀԱՊԿ-ին, ապա դա այլ ֆորմատ է, եւ ՀԱՊԿ-Հայաստան յարաբերութիւնները վերաբերում են անվտանգութեան աւելի լայն շրջանակների, որտեղ ՆԱՏՕ-ի դերը Հայաստանի համար աւելի քիչ է»:

Յաւելով հարցին, թէ հետագայում Հայաստանը չի՞ կանգնի «կաթմ, կաթմ»-ի առաջ, քաղաքագէտը պատասխանեց. «Յամենայն դէպս՝ այսօրուայ վիճակում այդ խնդիրը դրուած չէ: Հայաստանը ՀԱՊԿ-ի անդամ է, իսկ ՆԱՏՕ-ի հետ համագործակցութիւնը կրում է այլ բնոյթ, աւելի ցածր մակարդակի է, համագործակցութեան ֆորմատը եւ ուժաւոր բացարձակապէս այլ են», - ասաց նա:

Ըստ Ալեքսանդր Մարգարովի՝ Ռուսաստան-ՆԱՏՕ յարաբերութիւնների սրացումը որոշակի անդամակցութեան կարող է ունենալ Հայաստանի վրայ, որը հնարաւոր է՝ կապուած լինի հետագայում ՆԱՏՕ-Հայաստան համագործակցութեան ֆորմատի փոփոխութեան են-

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՅԱԲԵԿԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋՆՆՈՒՄԸ ԻՐԱՔԻ ՄԷՋ

Հետզհետե նորանոր հողատարածքներ գրառող եւ նիւթական նոր աղբիւրներու տիրացող իսլամական ահաբեկչական կազմակերպութիւնը կարեւոր յառաջընթացի մէջ եւ թէ ռազմամթերքի, թէ մարտիկներու եւ թէ նիւթական գետնի վրայ:

Արդարեւ վերոյիշեալ կազմակերպութիւնը որ կը կոչուի նաեւ ISIS կամ «ՏԱՀԷՇ» իր հսկողութեան տակ առած է իրաքեան երկու նաւթահորեր եւ սկսած է քարիւղ վաճառել շատ աժան գիներով: Ասիկա պատճառ դարձաւ որ միջազգային շուկայի վրայ քարիւղի գինը արժանանայ: «Տա-հէ» բռնագրաւելով կարգ մը դրամատուներ, իւրացուցած է 425 միլիոն տոլար: Այլ եկամտակոտներով միասին «ՏԱՀԷՇ»-ի տրամադրութեան տակ կը գտնուի աւելի քան 3 միլիար (պիլիոն) տոլար:

Միւս կողմէ, մօտ 100 անձեր մահացան իրաքի հիւսիսային Քոժօ քաղաքին մէջ, երբ իսլամական

Պետութիւն կազմակերպութեան զինեալներ սպանդ գործեցին եգիպտի գիւղացիներուն շարքերուն մէջ:

Իրաքի արտաքին գործոց նախարար Հոշէար Ջիպրիի համաձայն, ծայրայեղականներու շարասիւնը մոռաք գործած է գիւղ եւ սպաննած տասնեակներով եգիպտեր, որոնք մերժած էին փախուստ տալ իրենց բնակավայրերէն եւ ապաստանիլ աւելի ապահով վայրեր:

Վերջերս «ՏԱՀԷՇ» նոր շրջաններ գրառած է Սուրիոյ մէջ եւ կը սպառնայ առաւել եւս վտանգել երկրի անդորրութիւնը: Գրառուած է Ջապատանիի մերձակայքի կարգ մը շրջանները: Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ էլ Մուալլէմ ըսած է թէ անպատեհ Սուրի մէջ: Սակայն պահանջ կը դնէ որ այդ յարձակումներուն կապակցութեամբ նախապէս տեղեակ պահուի Սուրիոյ կառավարութիւնը:

ՁԻՆԱԴԱԴԱՐԻ ԶԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ԿԱԶԱՅԻ ՄԷՋ

Պաղեստինի նախագահ Մահմուտ Ապպէս յայտարարեց կազմի մէջ 30 օրուայ զինադադարի համաձայնութիւն մը կնքելու մասին: Ան շնորհակալութիւն յայտնեց Եգիպտոսին եւ կոչ ուղղեց մարդասիրական օգնութիւններ առաքելու կազմ: Ջինադադարը կը ներառէ սահմանային անցակէտերու բացումը եւ շինարարական նիւթերու առաքումը՝ կազմ: Համաս շարժումը հաստատեց, որ եգիպտական միջնորդութեամբ կարելի եղած է յանգիլ զինադադարի համաձայնութեան՝ շնորհիւ պաղեստինցիներու դիմադրութեան եւ իսրայէլեան ոսնձգութիւններուն դէմ դնելու կամքին: Համասի բանբեր Սամի Ապու Ջուհրի յայտարարեց պաղեստինեան կողմին յաղթանակը եւ դիտել տուաւ, որ իրենք ծանր հարուած հասցուցած էին իսրայէլեան բանակի հեղինակութեան:

Իսրայէլի ապահովական սեղմ

ԼԻԲԱՆԱՆԻ ՈՒԺԱՆԻԹԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԹԻՐ ՆԱԶԱՐԵԱՆԻ ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՏԱԻՐՈՒԹԵԱՆ

Լիբանանի Ելեկտրական ընկերութեան պայմանագրային աշխատաւորները շաբաթներէ ի վեր գործադուլ յայտարարած են, պահանջելով աշխատավարձի յաւելում եւ արդար իրաւունքներու ձանաչում: Այս առթիւ ուժանիւթի նախարար Արթիւր Նազարեան, կոչ ուղղած է գործադուլ ընդունելուն վերսկսիլ իրենց կանոնաւոր աշխատանքին: Ան միաժամանակ ազդարարեց որ եթէ դրութիւնը այս կերպ շարունակուի կրնայ ելեկտրական հոսանքի յաւելեալ կրճատումներ տեղի ունենան:

Պայմանագրային պաշտօնեաներու նստա ցոյցին գուզահեռ ժողով մը գումարուեցաւ ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարութեան մէջ: Աշխատանքի նախկին նախարար Սալիմ ժրէյասթիին ներկայացուց պայմանագրային պաշտօնեաներու կարգավիճակի օրինական պատկերացում մը եւ զարմանք յայտնեց

կառավարութեան շատ մը նախարարներ դէմ արտայայտուեցան զինադադարի համաձայնութեան, իսկ ներքին անվտանգութեան նախարարը համոզում յայտնեց, որ կազմի պատերազմը տակաւին վերջնականապէս չէ աւարտած եւ Համասը կը վայելէ հրթիռներու արձակման մեծ կարողութիւններ, ուստի անհրաժեշտ է կործանել զինւորական ենթակառուցները:

Քանի մը անգամ Պաղեստինի եւ իսրայէլի միջեւ կնքուած զինադադարի խախտումներէ ետք կռիւները վերսկսած էին երկու կողմերու միջեւ: Իսրայէլեան օդուժի ռմբակոծումներուն հետեւանքով թիրախ ընտրուած էին կազմի մզկիթները, ժողովրդային բնակարանները, ինչպէս նաեւ սահմանային անցակէտերը: Իրենց հերթին պաղեստինցիներ հրթիռներով եւ հրասանդներով հակահարուածներով պատասխանեցին հակապարզ կողմին:

պաշտօնեաներու պահանջներուն նկատմամբ: Ժրէյասթիի համաձայն, տրամաբանական չէ գործ տրամադրել բոլոր պայմանագրային պաշտօնեաներուն, որովհետեւ այդքան մեծ թիւի կարիք չկայ: Նախկին նախարարը նաեւ դատապարտեց պայմանագրային պաշտօնեաներուն նստացոյցը, ճամբաներ փակելու երեւոյթը եւ նշեց, որ պաշտօնեաները կը խաղան կրակի հետ:

Պայմանագրային պաշտօնեաները հակադարձեցին մամլոյ ասուլիսով մը: Անոնք դատապարտեցին ժրէյասթիի սպառնալիքները եւ կոչ ուղղեցին գերմանալու յարանուանական ամբաստանութիւններէն: Պաշտօնեաները կառչածութիւն յայտնեցին իրենց իրաւունքներուն եւ պահանջներուն, նաեւ նախկին նախարարը պատասխանատու համարեցին պաշտօնեաներուն հետ որեւէ հաւանական բախումի:

ԵՐԲ 85-Ը ԶԱԿԱՍԱՐ Է 3,5 ՊԻԼԻՈՆԻ

ՄԵԹՐՊԱՐԳԵՒԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Այս տարուայ Յուլիս ամսուն վերջերը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) կողմէ

հրապարակ հանուած Մարդկային Յառաջիկայի Գերեզման Տարեկան Տեղեկագիրը (UN Human Development Annual Report) կը նշէ թէ մարդկութեան ներկայ գրեթէ եօթը պիլիոն ընդհանուր թիւին 1,2 պիլիոնը կ'աշխատի 1,25 տոլարէն ցած օրավարձով, եւ թէ մարդկութեան կէսը, այսինքն 3,5 պիլիոնը, միամաքար կը շահի աւելի պակաս քան աշխարհի 85 ամենէն հարուստ մարդիկը:

Եւ տեղեկագրութեան վերջաւորութեան ցուցակի վրայ կը յիշուին երկիրներու աստիճանները՝ ըստ կեանքի լաւ պայմաններ ընծայող տուեալներու: Առաջատար դիրք ստացող Նորվեկիայէն ետք, Գանատան կը ստանայ 8-րդ դիրքը, Աւստրալիայէն (2), Ամերիկայէն (5) եւ Գերմանիայէն (6) ետք: Եւ հոնկէ վերցնելով աստիճանները այն երկիրներուն որ կը խորհիմ թէ մեզ կը հետաքրքրեն, կը ստանանք հետեւեալ ցուցակը.- Հայաստան (87), Ատրպէյճան (76), Վրաստան (79), Լիբանան (65), Թուրքիա (69), Սուրիա (118), Իսրայէլ (19), Եգիպտոս (110), Ֆրանսա (20), Անգլիա (14), Իտալիա (25), Ռուսիա (57), Չինաստան (91), Իրան (75), Յորդանան (77) եւ Գուպա (44):

Այսպիսով, շատերու կողմէ խեղճուկրակ նկատուող Գուպան կը դատուի հզօր Ռուսիայէն եւ Չինաստանէն առաջ, եւ մեր Հայաստանն ալ իր հարեւան երկիրներէն ոչ շատ ետեւ:

Յատկանշական է հոս թէ մարդկային էակը, որ ըստ բնութեան օրէնքին եւ բոլոր կրօններու եւ վարդապետութիւններու դաստիարակութեանց հաւասարապէս եւ հաւասարաբար ծնելու աստուածատուր պարգեւին իրաւատէրը կը նկատուի, ծնելէ ետք կ'ենթարկուի դրամատիրութեան դաժան եւ անարդար իրավիճակին ներքեւ ապրելու, եւ աշխարհի ամէն տեսակի հաշուապահական օրէնքներուն խախտումով կը պարտադրուի տնտեսական նժարին մէջ իր 3,5 պիլիոն թիւը 85 թիւին հաւասարեցնելու:

Բոլորս գիտենք մեր մանկութեան գոց սորված հայ բանաստեղծին խօսքը որ կ'ըսէ. «Ով մարդկային արդարութիւն, թող ես թքնեմ քո ճակատին»: Այս խօսքը, որ ուղղուած է մարդկութեան անցեալի կեանքը դասաւորող հսկաներուն, զօրաւորներուն եւ ոճրագործ դեկաւարներուն, որոնք պատճառ դարձած էին մեր ցեղասպանութեան, հայրենաքանդ աքսորին եւ տեղա-

հանումին, այսօր ալ շատ ճիշդ ձեւով կրնայ գործածուիլ՝ թքելու համար երեսին մարդկութեան, որ առիթ կ'ընծայէ իր յառաջապահ շարքերէն թուշող եւ ամպերէն վեր ապրող միայն 85 հոգին ունենալու աւելի շահ եւ հարստութիւն, քան՝ շարքերուն ետեւէն սողացող 3,5 պիլիոնը: Հարստութիւն մը, որ դիզուած է մարդկութեան կէսէն աւելին ստրուկի պէս աշխատեցնելով կամ գայն անգործ դարձնելով. հարստութիւն մը, որ շատ յաճախ շահուած չէ խելքով եւ խանդով, այլ՝ յափշտակուած է ճանկերով, մագիլներով, անարդար մենաշնորհներով, արկածախնդրութիւններով եւ «տուպարա»ներով:

Կար ժամանակ, երբ մարդկայինը մարդկութեան հաւասարութեան գաղափարներու տենչով մղուած ըմբոստացած էր քիչ մը ամէն տեղ եւ գօրաւորին անիրաւ կարգերը տապալած էր, ժողովրդավար իշխանութիւններ ստեղծած էր, ապա ընկերավարութիւն ու համայնավարութիւն հաստատելու ջանքեր կատարած էր: Մէկ մասը անցեալի այդ ըմբոստներու ժառանգորդներուն կը վայելէ այսօր այդ ըմբոստութեան արդիւնքը Եւրոպայի եւ մանաւանդ Սկանտինաւեան յառաջադէմ եւ քաղաքակիրթ երկիրներուն մէջ, ուր կայ ժողովրդային ընդունելի ընկերային ապահովութիւն, արդարութիւն եւ հաւասարութիւն: Միւս մասը ըմբոստացող մարդկութեան, որ Սովետական Միութիւն կերտեց եւ անոր մէջ ժողովուրդներ համախմբեց, եւ պրոլետարիատ (proletariat) բռնատիրութիւն հաստատեց ու Ստալինեան կուսակցապետերու կործանարար դասակարգ ստեղծեց, իր ներկայ սերունդներուն եւ ժողովուրդներուն ժառանգեց ազգամիջեան պատերազմ ու օլիկարքային դասակարգ, որոնց պատճառաւ շոգիացան ամէն տեսակի ընկերային ապահովութիւն, արդարութիւն եւ հաւասարութիւն: Եւ յետոյ, կան այդ երկու մասերէն տարագրեալ բեկորներ, որոնք գտնելով փրկարար արիւնքը Ամերիկայի, Գանատայի եւ Աւստրալիոյ, կ'ապրին բարեւոք վերածնունդ մը որ յաճախ նախանձը կը շարժէ հոն մնացողներուն:

Անբնական թուող եւ զայրոյթ յառաջացնող արդի երեւոյթը որ 85 մարդոց կու տայ ամբողջ մարդկութեան կէսին չափ հարստութիւն դիզելու կարելիութիւն, անպայման օր մը եւ տեղ մը ըմբոստութիւններու ծնունդ պիտի տայ, եւ այն ատեն մարդկայինը մարդկութեան իր քուն մտած ներկայէն դուրս ելլելով պիտի - globalization-ի պարխապները խորտակէ:

Սերժ Սարգսեան Զամաձայն ԶԷ

Շարունակուած էջ 1-էն

յաստանի մէջ կը կազմէ 70 տոկոս: «Մարդիկ, երբ ասում են ստուեր կա կամ ստուերը եօթանասուն տոկոս է, որտեղից գիտեն, այսինքն՝ այդ մարդիկ ի՞նչ է, ունեն սեփական վիճակագրական վարչութիւն: Միակ բանը, որով կարող են իրենք դատել այդ մասին՝ իրենց գործունէութեամբ, բիզնէսով, իրենց հարեւանների եւ բարեկամների բիզնէսով է, երբ գիտեն, որ իրենք, իրենց հարեւանները, իրենց բարեկամները ստուերում են աշխատում: Հակառակ պարագայում, որտեղից գիտեն», - ըսած է Սերժ Սարգսեանը՝ աւելցնելով. - «Իսկ ընդհանրապէս

ամբողջ աշխարհում դա ինչպէ՞ս է չափուում. չափուում է հետեւեալով, թէ համախառն ներքին արդիւնքի ո՞ր մասն է գալիս բիւջէ հարկերի տեսքով, եւ երբ մենք հինգ-վեց տարի առաջ ունէինք տասներեք տոկոս հաւաքելիութիւն, այսօր ունենք քսաներկու տոկոս: Հիմա հաշուէք՝ մեր երկրում ստուերը կրճատուել է, թէ՞ աւելացել: Սա է ամբողջ իրականութիւնը: Նայէք, տեսէք մեր տնտեսութիւնը որքան է զարգացել վերջին հինգ տարիներին, եւ չեմ ասում շատ է զարգացել, եւ մեր համախառն ներքին արդիւնքը շատ է աւելացել, բայց տեսէք՝ մեր բիւջէն գրեթէ կրկնապատկուել է, իսկ դա ինչպէ՞ս է եղել, որտեղից»:

# ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՄԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐԸ ԴՐԱՄԻ ՀԱՄԱՐ ԻՐ ՀՈԳԻՆ ԿԸ ԾԱԽԷ ԹՈՒՐՔԵՐՈՒՄ

**ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ**  
«Քալիֆորնիա Քուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր  
[www.TheCaliforniaCourier.com](http://www.TheCaliforniaCourier.com)



Ուաշինգթոն երկար տարիներ տառապած է լիտի քաղաքական գործիչներէ, սակայն Հայկական հարցին առնչութեամբ կեղծաւորութեան առաջին մրցանակը պէտք է տալ նախկին քոնկրետական Ռիչըրտ Կեֆլըրտին, որ 1989-1995 թուականներուն եղած է Ներկայացուցիչներու տան մեծամասնութեան, իսկ 1995-2003 թուականներուն՝ փոքրամասնութեան ղեկավար:

Աւելի քան երկու տասնամեակի նպաստ Հայոց ցեղասպանութեան ճանաչման պայքարելէն ետք, Կեֆլըրտ 2005 թուականին պաշտօնաթող ըլլալէն անմիջապէս ետք սկսաւ մեծ գումարներ շահիլ լուսինիկ ընկերով նոյն հարցին դէմ, որուն ջատագովը եղած էր Քոնկրեսի մէջ...

Օգտուելով Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի նախաշեմին թրքական խուճապէն՝ «Տը Կեֆլըրտ կրուի կաւըրմընթ էֆերզ» ընկերութիւնը տարուան սկզբին ընդլայնեց իր վաղեմի լուսինիկ յարաբերութիւնները Թուրքիոյ Հանրապետութեան հետ: 1.4 միլիոն տոլար արժողութեամբ նոր պայմանագիրը կը ներառէ ենթակապալառուներ Տիքսթէյն Շափիրոն (տարեկան 531 հազար տոլար), Կրինպըրկ Թրորիլը (տարեկան 314 հազար տոլար), Լիտիա Պորլենտը (տարեկան 180 հազար տոլար) եւ Պրայլըն Ֆոռնին (տարեկան 78 հազար տոլար): «Կեֆլըրտ կրուի»-ը եւ անոր գործընկերները համաձայնած են Թուրքիոյ տրամադրել հետեւեալ ծառայութիւնները.

ա) Առաջարկել եւ հետապնդել, Միացեալ Նահանգներու կառավարութեան ընդունումը օրէնքներու եւ այլ որոշումներու, որոնք կը նպաստեն Թուրքիոյ շահերուն եւ կ'ապահովեն բարձր վարկանիշ՝ Թուրքերուն, Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներ-Թուրքիա յարաբերութիւններուն համար:

բ) Պահպանել եւ ընդլայնել Թուրքիոյ եւ Թուրք ամերիկացիներու հարցերով քոնկրետական խմբաւորումը:

գ) Իրագեկել Քոնկրեսի ան-

դամները եւ Միացեալ Նահանգներու վարչակազմը Թուրքիոյ համար կարեւորութիւններ կազմակերպող հարցերու մասին:

դ) Անյապաղ տեղեկացնել Թուրքիոյ՝ անոր համար կարեւորութիւններ կազմակերպող հարցերու վերաբերեալ Քոնկրեսի կամ գործադիր իշխանութեան որեւէ որոշման մասին:

է) Հակիրճ վերլուծութիւն պատրաստել Քոնկրեսի եւ գործադիր իշխանութեան մէջ Թուրքիան յուզող հարցերու զարգացումներու մասին:

զ) Մատնանշել այն պաշտօնական հաւաքոյթները եւ հանրային ձեռնարկները, որոնց, «Կեֆլըրտ կրուի»-ի կարծիքով, պէտք է մասնակցի [Թուրքիոյ] ղեկավարման անձնակազմը, կարելիութեան պարագային՝ դասաւորել անհրաժեշտ հրաւերներ:

է) Մատնանշել եւ կազմակերպել տեղական եւ ամբողջ երկրի մակարդակով ելոյթներ՝ Թուրքիոյ ղեկավարման աշխատակիցներու կամ անոնց նշանակած կամ առաջարկած անձերուն համար՝ համաժողովներու մէջ Թուրքիոյ վարկը բարձրացնելու եւ Քոնկրեսին մէջ անոր շահերը յառաջ մղելու համար: Թուրքիոյ ցուցումներուն համաձայն, ասիկա պէտք է համակարգուի Թուրքիոյ հանրային կապերու ծառայութիւններու մատակարար(ներ)ին հետ:

ը) Պահպանել ու ստեղծել գինակցութիւններ այլ շահագրգիռ խումբերու հետ, որոնց նպա-

տակները նման են կամ ընդունելի են Թուրքիոյ կողմէ»:

Յատկանշական է, որ գործընկեր Կրինպըրկ Թրորիլի պարտականութիւններուն մէջ ներառուած են «կապերու մշակումը եւ օգտագործումը Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան, պաշտպանութեան նախարարութեան եւ Ազգային անվտանգութեան խորհուրդին մէջ՝ անոնց փոխանցելու համար ցեղասպանութեան հարցին ծանրակշռութիւնը եւ հնարաւոր սպառնալիքը Միացեալ Նահանգներ-Թուրքիա յարաբերութիւններուն»:

Հակառակ անոր որ Ուաշինգթոնի մէջ կան բազմաթիւ լիտի լուսինիկներ, սակայն ոչ ոք կրնայ մրցիլ Ռիչըրտ Կեֆլըրտի վրդովեցուցիչ կերպարանափոխութեան հետ՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ջատագովէն վերածուելով ցեղասպանութիւնը ժխտողի... Այս խիստ կարեւոր բարոյական հարցին վերաբերեալ Կեֆլըրտի ամօթալի կտրուկ շրջադարձը առաջին անգամ բացայայտած էր «Տը Նիւ Ռիփապլիք»-ը, 23 Յունիս 2007ին հրատարակած՝ «Քէյ սթրիթը (լուսինիկ ընկերութիւններու փողոց) դրամ կը շահի 1915ի Հայոց ցեղասպանութենէն» խորագիրով յօդուածով: Քոնկրեսի մէջ 26 տարիներու ծառայութեան ընթացքին Կեֆլըրտ համահեղինակած է քանի մը բանաձեւեր Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ եւ բազմիցս խօսած՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման կարեւորութեան մասին: 2000 թուականին Կեֆլըրտ եւ Ներկայացուցիչներու տան այլ երկու ղեկավար քոնկրետականներ միացեալ նամակ ստորագրած էին՝ ուղղուած այն ժամանակուան խօսնակ Տենիս Հասթըրթին՝ յորդորելով անոր դասաւորել Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւին անյապաղ քուէարկութիւնը:

2005ի Յունուարին, Ներկայացուցիչներու տան իր աթոռը լքելէ ընդամէնը քանի մը օր ետք Կեֆլըրտ Ուաշինգթոնի մէջ բացաւ իր խորհրդատուական եւ լուսինիկ ընկերութիւնը: 2005-2009 թուականներուն ան դարձաւ կառավարութեան հետ կապերու

հաստատման գծով ռազմավարական խորհրդատու DLA Piper միջազգային իրաւաբանական ընկերութեան համար, որ ամսական 100 հազար տոլար ստացած է Թուրքիոյ շահերը պաշտպանելու համար, ինչպէս՝ լուսինիկ Հայոց ցեղասպանութեան բանաձեւի ընդունման դէմ Ներկայացուցիչներու տան մէջ... «Տը Նիւ Ռիփապլիք»-ը հարողդած էր, որ Կեֆլըրտ անդրադարձնելու կազմակերպած է Թուրքիոյ խորհրդարանի անդամներու եւ Ներկայացուցիչներու տան ղեկավարներու միջեւ, օգնած է Միացեալ Նահանգներու մէջ Թուրքիոյ դեսպանին հանդիպում ունենալու «Թերահաւատ» Նենսի Փելոսիի հետ եւ շրջանառութեան մէջ դրած Հայոց ցեղասպանութիւնը ժխտող՝ «Կոչ իմաստութեան» վերնագիրով գրքոյկը:

Ամերիկահայերը եւ բարի կամքի տէր բոլոր մարդիկ պէտք է լուռ մնան, երբ Կեֆլըրտ կը հարստանայ թրքական արիւնտա դրամներով: Անոնք պէտք է զգուշացնեն անոր լուսինիկ ընկերութեան յաճախորդները՝ «Անհետը պասէ», «Պոլիսիկ», «Չեւրոն», «Ինթերփրայս ռենթ քար», «Ճեներըլ էլէքթրիք», «Կոլումբոս սաչըզ», «Կոլկըլ», Լոս Անճելըսի օդակայան, Ֆուլթոնի ազգային լիկա, Օքլընտի նաւահանգիստ եւ «Եունայթըտ էրլայնզ», որ պոչքոթի պիտի ենթարկեն անոնց արտադրանքն ու ծառայութիւնները, եթէ այս ընկերութիւնները չեղեալ չհամարեն իրենց պայմանագիրները «Կեֆլըրտ կրուի»-ին հետ: Նաեւ բողոքի նամակներ պէտք է յղել «Ֆորտ» ընկերութեան եւ «Սքրիփզ» հետազոտական հաստատութեան՝ իրենց տնօրէններու խորհուրդի մէջ Կեֆլըրտին տեղ յատկացնելուն համար:

Ի վերջոյ, ընթերցողները պէտք է ուղղակի նամակներ յղեն Կեֆլըրտին (Gephart Government Affairs, 1101 K Street, N.W., Suite 310, Washington, D.C. 20005) կամ [dickgephardt@gephardt.com](mailto:dickgephardt@gephardt.com) հասցեով ելեկտրոնային նամակներ ուղարկեն՝ յանդիմանելով զայն իր խիստ անբարոյական վարքագիծին համար:

Թարգմանեց՝  
ՌՈՒԶԱՆԱ ԱՒԱԳԵԱՆ

## Զեք Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
Email: [massis2@earthlink.net](mailto:massis2@earthlink.net)

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**A.B.A. INSURANCE SERVICES**

*Insurance coverage can help you financially!*  
Ապահովագրութիւնը Աճիրաժեղա է

Coverage & Protection should be on the top of your priority list.

# Ո՞ՒՐ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԳԱԲՆՄԱՆ ՈՒՂԻՆ

## ԱՐՄՆԵՆ ՍԱՐԳԻՍԻ ԿԱՍԵԱՆ

Իբր տնտեսագետ՝ մեր ժողովուրդի ապագայի բարգաւաճումը ապահովող մի ծրագիր ուղեցի մշակել, հիմնուած իմ երկար տարիներու գիտարկումներուս եւ փորձառութեանս վրայ: Նախ կը փափաքիմ օգտակար ըլլալ իմ հայրենի պետութեան հզօրացման եւ յետագայի մեր ազգային երազներու եւ իղձերու իրականացման:

Ներկայիս մեր կառավարութիւնները նկատի չառնելով մեր փոքրաթիւ լինելը դժբախտաբար կ'անտեսեն ժողովուրդին գործ հայթայթելու պահանջը, եւ փոխարէն կարեւոր հիմնարկութիւններ օտարներու վաճառելով կը ջլատեն մեր երկրի տնտեսական աճման կարողութիւնը: Իսկ կարգ մը տեղական տնտեսագետներ այս բացասական ու ամուլ վիճակը մերթ ընդ մերթ գրի առնելով տրամաբանական եւ գործնական լուծում մը ցարդ չեն առաջարկած եւ օրուան վիճակը ներկայացուցած են այլեւաչափ բառախաղերով:

1991 թ. անկախութեան առաջին տարիներուն սփիւռքահայերը ուզած են ներդրումներ կատարել, եւ ըրած են: Բայց այս շարժումը տեղական հակազդեցութիւններու պատճառաւ ձախողութեան մատնուած է, իսկ ներկայիս շատ քիչ թիւով սփիւռքահայեր փոքր չափով ու վախճանով ներդրումներ կը կատարեն եւ այդ ալ մեր ակնկալած աշխատանքը ժողովուրդին չի հայթայթել: Այս երեւոյթներէն գատկան թրքական եւ ազերիական շրջափակումները եւ Արցախեան քաղաքական անկայուն վիճակը, որոնք ձեւով մը կը կասեցնեն գալիք ներդրումները:

Ես պիտի ջանամ կարգ մը առաջարկներ ներկայացնելով բարելաւել այս վիճակը:

Հայաստան նախ պէտք ունի հում նիւթի թեթեւ արդիւնաբերութեան տեղական արտադրութեան համար, առայժմ մեր երկրի մէջ գոյութիւն ունեցող հանքերը նիւթականի չզոյութեան պատճառով մեծամասնութեամբ բանուկ չեն: Ես կ'առաջարկեմ զանոնք բանեցնելու համար օգտուիլ տեղական դրամատուներու ներդրումներէն որ անխուսափելիօրէն պիտի նպաստէ երկրի տնտեսական զարգացման:

Յաւալի երեւոյթը այն է որ մեզ շրջափակող թուրքիոյ թեթեւ արտադրութեան գրեթէ բոլոր ապրանքներէն մաս մը կը ծախուին Հայաստանի շուկաներէն ներս եւ անոնց համար կը վճարուի նուազագոյն տարեկան 15 միլիոն Ա.Տ.ի գումար մը: Յաւալ սրտի մինչեւ օրս չենք գիտեր թէ ինչո՞ւ մեր կառավարութիւնը ապրանքներու մուտքը ազատ թողած է Հայաստանեան շուկաներու մէջ:

Հայաստան 23 տարիէ ի վեր անկախ է բայց օրուան կառավարութիւնները ցարդ չեն կրցած ժողովուրդի կենսական հարցերը լիովին լուծել իրենց նիւթական նեղ դրութեան պատճառաւ: Այսօր երկրի տնտեսութեան հիմքը կը կազմէ շինարարութիւնը մինչ անոր համար ներածուած ապրանքները ասեւրի չափով մեծ է նիւթականապէս, բան մը որ շատ մտահոգիչ է: Իսկ երկրորդ գծի վրայ գտնուող զբօսաշրջիկութիւնը զգալիօրէն աւելնալով հանդերձ տակաւին գոհացուցիչ վիճակի մը չէ հասած:

Գալով գիւղատնտեսութեան այդ ալ կապուած է կլիմայական պայմաններու կացութեան, իսկ շուկայի այլեւաչափ ուտեստեղէններու գիները զգալիօրէն աւելնալով մտահոգիչ կացութիւն մը ստեղծուած է: Ծատ մը սնունդ արտադրող գործարաններ կան, որոնք լիովին չեն գոհացներ ներքին շուկան: Սակայն այս ձեռնարկները իրենց արտադրութեամբ մեծածաւալ չեն եւ հետեւաբար կը կարօտին պետական նիւթական օժանդակութեան, բարձր մակարդակի մը հասնելու համար:

Հայաստանի կառավարութիւնները եւ դրամատուները մինչեւ օրս չեն մասնակցած որեւիցէ մեծ գործարանի մը կառուցման կամ հանքի մը բացման աշխատանքներուն: Սա որոշ է որ եթէ այս ուղղութեամբ գործնական քայլեր առնուին եւ աշխատատեղիներ ստեղծուին կարծեմ արտագաղթը մասամբ կը կենայ: Անցնող տարիները ցոյց տուին թէ ցարդ կիրարկուող տնտեսական ձեւը մեր երկրին մէջ մեզի համար ձեռնտու չէ: Մենք պէտք ունինք աւելի սոցիալ դեմոկրատ դրութեան մը, որ կարենայ տնտեսական շուտափոյթ նուաճումներ յառաջացնել, այս ալ կարելի է այսօրուան տուեալներով գործնականի մէջ դրուի խառն տնտեսական գործունէութիւն մը, որուն անմիջական մասնակիցները պէտք է ըլլան պետութիւն, տեղական դրամատուները եւ դրամատէրերը: Երբ ժողովուրդի մեծամասնութիւնը կը բաղկանայ աղքատներէն, ուստի չենք կրնար ակնկալել որ անոնց գործատեղիներ բանան աշխատանքի համար: Իսկ դրամատէրերը, 30% չափանիշով չեն ուզեր ֆապրիքաներ բանալ, կը նախընտրեն դուրսէն ապրանք բերելով ծախել եւ այսպէսով կը կացիւնահարեն ներսի թեթեւ ու փոքր ապրանքներ արտադրող աշխատատեղերը: Միւս կողմէ երկրի ծանր արդիւնաբերութիւնը շատ տկար է եւ կարող չենք առայժմ անոնցմէ լիակատար օգտուիլ, իսկ վերն ալ մատնանշեցինք միւս կողմէ Հայաստանի մէջ գտնուող հանքերու վիճակն ալ քաջալերական չէ:

Որեւիցէ արդիւնաբերութեան զարգացման համար այսօր պետութեան նիւթական օժանդակութիւնը անհրաժեշտ է: Եթէ կ'ուզենք հզօր Հայաստան մը ունենալ պէտք է արտաքին օժանդակութիւններ սպասելով ժամանակ կորսնցնենք եւ պատճառ ըլլանք տեղական ժողովուրդի անգործութեան եւ արտագաղթին: Մենք պէտք է մեր սեփական ուժերուն վստահինք եւ գործածենք:

Եթէ այս միջոցառումները յատուկ հրամանագրերով երկրի նախագահի կողմէ անյապաղ առնուին կը կարծեմ որ տնտեսական աճը չուշանար: Մենք ի յարկին կ'ունենանք սփիւռքահայութեան նիւթական լաչն աջակցութիւնը երբ այսպիսի քայլեր առնուին: Այսօր 21րդ դարակցերին սա իրականութեան հետ դէմ առ դէմ է ժողովուրդը թէ առանց պետական աջակցութեան կարելի չէ ոտքի կանգնեցնել քայքայուած մեր տնտեսութիւնը: Որովհետեւ միմիայն օրուան կառավարութիւնն է որ կրնայ մեծ քանակութեամբ փոխառուութիւններ կատարել ներկայացնելով իր երկրին նպաստող տնտեսական մեծ ծրագիրներ, որոնք մեծ մասամբ սեփական ժողովուրդին աշխատանք պիտի հայթայթեն: Այս

տրամաբանութեամբ կարելի կ'ըլլայ համաշխարհային դրամատուներէն փոխառութիւններ ստանալ եւ կառուցանել 5-10 հազար հոգիւնոց աշխատատեղիներ, օրինակ բեդրոլի գտարան մը:

Հայաստան միջազգային օրէնքներու վրայ հիմնուած եւ աշխարհի պետութիւններու կողմէ ճանչցուած հանրապետութիւն մըն է: Հետեւաբար հնարաւորութիւններ ունի տնտեսական մեծ ծրագիրներ մշակելու եւ զանոնք ներկայացնելով դրամատուներու եւ մեծ պետութիւններու փոխառութիւններ ստանալու զանոնք ի նպաստ երկրի տնտեսական վերելքին գործածելու: Ահաւասիկ երբ Հայաստանի մէջ այս տեսակի խառն տնտեսական գործընթաց մը իրականացուի, չեմ կարծեր թէ այլեւս դուրսէն եկած ներդրումներու սպասումով ժամանակ պիտի կորսնցնենք:

Իսկ այս բոլորը իրագործելու համար անյապաղ պէտք ունինք համար յարմար ճանապարհներու: Երկրի մը բարգաւաճման անմիջական ազդակներէն մին ճանապարհաշինութիւնն է: Գիւղերը պէտք է կապուին քաղաքներուն: Իսկ մեր երկիրը պէտք է կապուի հիւսիս հարաւ մայր ուղիով մը: Այսօր կարծեմ սկսած է աշխատանքը այդ ուղղութեամբ, փոխադրական նախարարութիւնը նաեւ անյապաղ պէտք է ընթացք տայ օդային ապրանքափոխառութեան (cargo) գիւղատնտեսական ապրանքները արտասահմանեան երկիրներ արագօրէն փոխադրելու համար: Մինչ այդ պէտք է ստեղծուի տեղական ուտեստեղէններու արտադրութիւնները այս կիրառումով ժողովուրդին շատ աժան գիներով ծախելու հնարաւորութիւններ կը ստեղծեն, իսկ եթէ օդային փոխադրութեան միջոցները հաստատուին, մի քանի

հազար հոգի ալ աշխատանք կ'ունենայ:

Այսօր այս գործընթացին իբր առաջին հանգրուանը եղող բեդրոլի գտարանը կրնանք սկսիլ Մեդրի քաղաքը կառուցանելով, որովհետեւ Պարսկաստանի սահման է: Այս համալիրի ֆապրիքայի կառուցումով մենք կրնանք արտադրել կարգ մը թեթեւ արդիւնաբերութեան վերաբերեալ ապրանքներու հում նիւթերը: Հոս կարելի է յիշել մի քանի հատը.

ա. Պենգին  
բ. Ռապրը (ինքնաշարժի անիւ եւ լաստիկէ ապրանքներ)

գ. Բլաստիք  
դ. Պէնզոլ

Եւ տակաւին քիմիական այլ նիւթեր, այս տեսակի մեծ կոմպլեքսներ մը կազմաւորման եւ ֆինանսաւորման համար անյապաղ պետական աջակցութիւն պէտք է: Չտարանի համար անհրաժեշտ քարիւղը հեշտօրէն կ'ապահովուի Պարսկաստանէն:

Չտարանէն ձեռք ձգուած հում նիւթերու շնորհիւ պետութիւնը կամ գործարարները առիթ կ'ունենան հիմնելու թեթեւ արդիւնաբերութեան վերաբերեալ բազմաթիւ գործարաններ: Եթէ նոյնիսկ մի քանի գործարաններ կառուցուին 15% չափանիշով երկրին ներդրումային յաւելման առիթ կը ստեղծուի: Միեւնոյն ժամանակ կարելիութիւն կը ստեղծուի դրսից ներս եկող ապրանքներու շուկայական գիներու հաւասարակշռումը: Նաեւ պիտի ստեղծուի լաչնաճաւալ արտածումի կարելիութիւններ, որովհետեւ մեր երկրի գործաւորութեան գիները շատ մատչելի են, ուրիշ երկիրներու գիներէն:

Որ մնամք միշտ հայ հայ հայ...

Տանում է ինձ տանում է, Երգս հեռու երկիրներ, Գնում եմ ու ետ մայրում Փնտրելով միշտ հայերին, Ու երբ տեսնեմ ինձ հայեր, Ծարաւ սրտով հայ երգին, Համբուրում եմ ջերմագին Լսելով իմ երգերին:

Ծատ խօսքեր կան իմ բերնում, Ծատ երգեր կան իմ սրտում, Միայն մէկ բան ասեմ Խնդրում եմ որ ինձ լսեմ, Հեռու եմ մեմֆիսից, Բայց սրտով միշտ մօտիկ, Ըլլամք մէկ սէր միութիւն Օտարներ մեզ չխլին:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին ան մեկնած է Պարսկաստան ուր ապրած է 10 տարի, որմէ ետք փոխադրուած է Լոս Անճելոս:

Ան ամուսնացած է 1988ին, Լոնտոնի մէջ իր կեանքի ընկերոջ վարդուկի հետ, որոնք բախտաւորուած են երկու մանչ զաւակներով՝ Շանթ եւ Ալեքս: Յարօն իր երկու զաւակները դաստիարակած է հայկական շունչով որոնք դարձած են պարկեշտ եւ աշխատասէր անձնաւորութիւններ: 1988էն մինչեւ իր կեանքի վերջը ապրած է Լոնտոնի մէջ:

1973-1980 թուականներուն ապրած է Պարսկաստան: Արժանի եղած է թագաւորի շքանշանին: Երգահանդէս տուած է Demis Rusosի հետ Պարստակաստանի մէջ:

Ան իսկական հայասէր անձ մը ըլլալով երգած է կուսակցութիւններու, հայրենակցական միութիւններու եւ հայ վարժարաններու ձեռնարկներուն:

Իր լիշատակը թող անթառամ մնայ յաւիտեան:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 100,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Fax: -----

**Լիբանան**  
**Հ.Մ.Մ.Ի ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆ ՈՒ ԽԱՐՈՒԿԱՅԱՆԴԵՍԸ**



Հ.Մ.Մ.Պէջրուծի սկաուտական խումբը այս տարի իր տարեկան բանակումին համար ուղղուեցաւ Աշքուծ, ուր անաւասիկ քանի մը տարիներէ ի վեր Հ.Մ.Մ.ականներ իրենց վրանները կը լարեն եւ տարեկան բանակումի անմուսնաւի օրերը կ'անցնեն այս գեղատեսիլ լեռներուն վրայ, ուր քաղաքի խճուղումէն եւ փողիէն հեռու, մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ կ'ըմբռնեն գիւղական առողջարար օդը, ընկերային ջերմ եւ հարազատ շրջանակի մէջ:

Նախքան խումբի ժամանումը, երէց ընկերները արդէն իսկ բարձրացած էին բանակավայր եւ տքնաջան աշխատանքով կանգնեցուցած բանակավայրի կեդրոնական խարխիւր նկատուող հսկայածաւալ կայմը:

Առ այդ՝ բացի ամէնօրեայ ծրագրուած յայտագրէն, որուն գործադրութեան նախանձախնդրութեամբ կը հետեւէր սկաուտական խորհուրդը եւ խմբապետական կազմը, այս տարի բանակավայր այցելողներու շարքէն ամենայնուհանձնապէս էր Լիբանանի արեւմտահայ ֆետերասիոնի (Lebanese federation for Girl Scouts and Girl Guides) վարիչ մարմնի ատենապետուհի Տիկին Լենա Իւրնէշլեանի այցը, որ իրեն յատուկ գրաւիչ խօսելաճոփ, շինիչ եւ օգտակար բանախօսութեամբ մը հանդէս գալով, սկաուտական խումբի անդամներուն ներկայացուց սկաուտական շարժման նպատակները, մանրամասնութիւնները, օրէնքներն ու սկզբունքները: Տիկին Իւրնէշլեան իրեն ուշադիր հետեւող սկաուտներուն եւ արեւմտահայերուն խօսուելու եւ անձնական օրինակներով ներկայացուց նաեւ թէ որքան սկաուտական շարժումը կրնայ բարեփոխել պատանիին կեանքը, զայն վերածել ամէն օր բարի գործ մը կատարող աւելի լաւ անձի մը:

Տիկին Իւրնէշլեանի բանախօսութենէն ետք, տեղի ունեցաւ մտերմիկ զրոյց մը սկաուտներուն եւ երկարամեայ փորձառութիւն ունեցող հիւրին միջեւ:

Բացի Տիկին Իւրնէշլեանէն, Հ.Մ.Մ.ի բանակավայր այցելեց նաեւ Future պատկերասփիւռի կայանի հայերէն լուրերու բաժանմունքը, որ արդէն քանիերորդ տարին ըլլալով կ'անդրադառնայ Հ.Մ.Մ.եան սկաուտական շարժման գործունէութեան:

\*\*\*

**ԽԱՐՈՒԿԱՅԱՆԴԵՍ**  
 Ներկայութեամբ Ս.Դ.Հ.Կ. կեդրոնական վարչութեան փոխ-ատենապետ, Լիբանանի պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալիաքեանի, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ Ընկ. Ալեքսան Բէօշկէրեանի, եւ վարիչ

մարմնի անդամներու, Պէջրուծի Քաղաքապետական խորհուրդի անդամ Պրն. Արամ Մալեանի, Հ.Մ.Մ.ի կեդրոնական վարչութեան փոխ-ատենապետ Ընկ. Միսաք Նաճարեանի, Հ.Մ.Մ. Պէջրուծի ատենապետ Ընկ. Ռաֆֆի Մալեանի եւ վարչական անդամներու, ինչպէս նաեւ ծնողներու, ընկերներու եւ բարեկամներու, 2014-ի սկաուտական տարեկան խարուկահանդէսը մեկնարկեց Հ.Մ.Մ.ի փողերախումբի ոգեւորիչ կատարողութեամբ, որմէ ետք բացման խօսքով հանդէս եկան արեւմտահայերէն Քրիսթին Շահինեան եւ սկաուտներէն Յարութ Ասմինեան, որոնք իրենց բացման խօսքին մէջ հաստատեցին որ հակառակ խումբի ունեցած բոլոր վերիվայրումներուն, դժուարութիւններուն, խաբանարարական արարքներուն եւ բամբասանքներուն, իրենք տակաւին կը շարունակեն իրենց հաստատ երթը՝ փախտ աշտօրուան սկաուտական կազմը, որուն մաս կը կազմեն իսկապէս նուիրեալ Հ.Մ.Մ.ականները:

Բացման խօսք կատարողները իրենց շնորհակալութիւնը եւ երախտապարտութիւնը յայտնեցին նաեւ աշխոյժ եւ նուիրեալ սկաուտական խորհուրդի անդամներուն, որոնք իրենց աշխատանքային ժամերը եւ նոյնիսկ հանգիստի ժամերը զոհեցին, ըլլալու համար իրենց կողքին, սորվեցնելու եւ պատրաստելու համար ապագայ կազմի ղեկավարներն ու նոյնքան նուիրեալ անդամները:

Բացման խօսքը կատարողները իրենց ելուցքը աւարտեցին ըսելով. «Ի վերջոյ, մենք բոլորս, կուգանք, կ'անցնինք ու կ'երթանք, բայց Հ.Մ.Մ.ը, որպէս կառոյց եւ սփիւռքահայութեան փարոս, կը մնայ ու կը յարատեւէ, սակայն միայն ու միայն միասնականութեան ու նուիրական անձերու ջանքերու շնորհիւ: Մեր լողունգն է եւ կը մնայ՝ Հ.Մ.Մ.ի հետ, Հ.Մ.Մ.ի համար»:

Բացման խօսքէն ետք, հաւաքի սուրիչի կանչին արձագանգեցին եւ խարուկահանդէսի հրապարակի մուտքին հաստատուած վրանէն մէկ առ մէկ դուրս ելան եւ տողանցեցին գայլիկներու, արծուիկներուն, սկաուտական, արեւմտահայերէն եւ երէցական խումբերը, պատրաստուելով աւանդական դրօշակի եւ երգման արարողութիւններու:

Այս արարողութեան ընթացքին Հ.Մ.Մ.եան դրօշակին առջեւ իրենց կեանքի առաջին՝ սկաուտական նորընծայի երգումը կատարեցին արեւմտահայերէն՝ Մեղրի Պարխեան եւ Սթեֆանի Թազաչեան, սկաուտներէն՝ Յակոբ Էօրէնճեան,

Շաբ.ը էջ 18

**ՀԲԸՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԴԵՊԻ ՅԱՐԻՐԱՍԵԱԿ. ԱՊՐԻԼԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱԲԸ**



Ինչպէս նախորդ տարեշրջանի Մայիսին յայտարարուած էր, այս տարուան իւրաքանչիւր ամսուան 24-ին ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի աշակերտութիւնը պիտի ունենայ Ապրիլեան հերթական հաւաքներ, արթուն պահելու համար ազգային գիտակցութիւնը բոլորիս մէջ:

Ուրբաթ, 22 Օգոստոս, 2014-ի առաւօտեան, Մանուկարտեզէն մինչեւ 12-րդ դասարանի աշակերտութիւնը հաւաքուեցաւ դպրոցին բակը, ուր տեղի ունեցաւ սեղմ եւ բովանդակալից յայտագիր: Տնօրէն Պարոն Յակոբ Յակոբեանի սրտի խօսքէն ետք, պահանջատիրական իրենց արդար ձայնը լսողցին Աշակերտական Խորհուրդի անդամներ Սարին Քոթոյեանը եւ Նիքոլոս Փափագեանը: Ապա, խօսք առաւ Աշա-

կերտական Խորհուրդի պատասխանատու ուսուցչուհի Տիկին Ռօզալին Մատոյեան եւ Յեղասպանութիւնը ճանչցած բոլոր երկիրներուն դրօշակները գետեղուեցան հսկայ պատտառի վրայ: Հաւաքը աւարտեցաւ պասքէթպոլի խաղավայրին վրայ, ուր աշակերտութիւնը խմբուեցաւ եւ խորհրդանշական 100 եռագոյն փուչիկներ բարձրացան երկինք, աշակերտներու եւ ուսուցիչներու եւ տնօրէնութեան կողմէ: Ազգային հայրենասիրական երգերով եւ բարձր տրամադրութեամբ վերջ գտաւ յայտագիրը:

Շնորհակալութիւն վարժարանիս Հայերէնի Բաժանմունքի բոլոր ուսուցիչներուն եւ ծնողներէ բաղկացած «Հայ Ոգի» յանձնախումբին, որոնք անթերիօրէն կազմակերպած էին այս հաւաքը:

**ՀԱՏ ՊԱՏԱՅՈՒՄ ԶՈՒԱՐԹ ՖՐՈՅԵԱՆ**

<p>Շատ է պատահում, երբ մարդասպանն է ինձ այցի գալիս, Այն մարդասպանը, որ անուանուում է ՅՈՒՍԱՅԱՏՈՒԹԻՒՆ: Գալիս է, ճգնում իմ անուծ հոգին, Մեծ պատ է շարում արելույսիս դէմ, Ու տկարացնում մութ-կոյր խաւարում:</p>	<p>Շատ է պատահում, երբ մարդասպանն է ինձ այցի գալիս, Ռը մարդասպանն է ինձ այցի գալիս, Գիժ-ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ: Գալիս է, սուրում, պատեպատ զարկում, Գութը կորցրած կոկորդաբնում Շնչասպառ անում անուղի ճամբում:</p>
<p>Շատ է պատահում, երբ մարդասպանն է ինձ այցի գալիս, Այն մարդասպանը, որին ասում ենք ՀԻԱՍԹԱՓՈՒԹԻՒՆ: Գալիս է անխիղճ անկոչ հիւրի պէս, Հիացած ժպիտս պոկոտում-տանում Դառնացած հոգուս ափսոսանք բերում:</p>	<p>Շատ է պատահում, երբ մարդասպանն է ինձ այցի գալիս, Որ կը բժշկի ցաւերը հոգուս, Ու ինձ զօրացնի բերկրութեամբ խնդուն:</p>
<p>Շատ է պատահում, երբ մարդասպանն է ինձ այցի գալիս, Որ Աստոյ դասեր ժպիտով բարի, Ծով-լոյս արարեմ՝ նման օրհնանքի, Դառնամ մարդկութեան հոգու ապաւեճ, Լինեմ իմ լաւով յուշերում յաւեւ:</p>	<p>Չեմ ուզում գալը այն մարդասպանի, Որ սեւացնում է իմ ուրախ հոգին, Որ մորթոտում է առանց դանակի, Ու յետոյ նստում յաղթութեան գահին:</p>

### ՍԵՒ ԳԻՐՔ

#### ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ

Չկայ աւելի պերճախօս ու սրտառուչ բան, քան հայկական աղօթքը եւ աւելի մեծափառ բան, քան հայկական ժամերգութիւնը... Ապպա Ուիլֆրէյ 18-րդ դար «Այս գիրքը «Սեւ» կոչեցինք ոչ թէ անոր համար, որ հրապարակի վրայ գոյութիւն ունին ֆրանսական «Դեղին», ռուսական «Նարնջագոյն», անգլիական «Կապոյտ», թուրքական «Սպիտակ» գիրքերը: «Սեւ Գիրք», այսինքն՝ գիրք՝ սեւ, մութ, սարսափելի ոճիրներու մասին, որոնք այս ժողովածուին հեղինակներուն կարծիքով նմանը չունին մարդկութեան ամբողջ պատմութեան ընթացքին:

Ոճիրներ, որոնք մինչեւ օրս անպատիժ մնացած են: «Սեւ Գիրք», այսինքն հազարամեակներ իր հայրենիքի մէջ ապրած ժողովուրդ մը բնաջնջուած ու քարոտուած, իսկ երկիրը՝ շէնք ու քաղաքներ, տուններ ու սրբավայրեր, յուշարձաններ ու գերեզմանատուներ, բոլոր-բոլորը շուրջ հարիւր տարի սեւ հագած են, ըսել է՝ սգաւոր են...

Հայերուն ստեղծած դրախտավայրը Գեհէնի վերածուած է: Այս գիրքը այդ գեհէնին մասին է, իսկ հեղինակը՝ հաւաքական օտարերկրացիներ, գրողներ, պատմաբաններ, դիւանագէտներ, պետական, քաղաքական, հասարակական, կրօնական գործիչներ, լրագրողներ, գիտնորականներ, միսիոներներ: Անոնցմէ շատեր թուրքական ոճիրներու ականատեսը եղած են:

...Ճշմարիտ, վաւերական, ստուգապատու, հայամէտ գրադարանի դիմաց միշտ ալ որպէս սեւ պատ վեր խոյացած է կեղծիքի, աղանդողուած հարցերու, գրպարտութեան, անգիշտութեան թուրքամէտ գրադարանը: Ան աչտեղ, այս երկու ախոյեան գրադարաններուն մէջտեղը կը յայտնուի «Սեւ Գիրք», որուն հեղինակները ֆրանսացի, անգլիացի, գերմանացի, ռուս, ամերիկացի, իտալացի, գուլիցերացի, դանիացի, նորվեկիացի, պելձիքացի, հրեայ, յուն, շուէտացի, արաբ, քիւրտ, պարսիկ, լեհ, պուլ-

կար, չեխ եւ անգամ թուրք ու չէրքէզ հարիւրէ աւելի օտարերկրացիներն են, եւ ի լուր քաղաքակիրթ աշխարհի իրենց անկողմնաթուրքական ոճիրներուն եւ հայոց Մեծ Եղեռնին մասին:

Այս գիրքին հիմնական անսքող նպատակը այս է. թուրքական վայրագ կոտորածներն ու Հայոց Յեղասպանութիւնը ներկայացնել ոչ թէ հայ, այլ օտարագրի չէզոք հեղինակներու վկայութիւններով ու մեկնաբանութեամբ:

Սիրելի ընթերցող, այս գիրքին հեղինակները համեստօրէն չեն անդրադարձած իրենց կատարած յիշուած հակայական աշխատանքին, բայց մեր՝ ընթերցողներուս պարտքն է, անպայմանօրէն մէկ առ մէկ յիշատակել անոնց անունները, բան մը, որ մենք սիրով ու պատասխանատուութեամբ յանձն կ'առնենք ընել այս յօդուածաշարքի անարտին: Այժմ, սիրելի ընթերցող, նախքան համաշխարհային ճանաչում ունեցող մեծ մտաւորականներու հեղինակաւոր վկայութիւններուն անցնելը, մէկ պարբերութեամբ եւս կ'ուզենք անդրադառնալ «Սեւ Գիրք»-ի հեղինակներուն.

«Այս գիրքը կը յուշէ, որ պէտք է ճանչնալ այն բազմազուլի հրէշը, որուն անունն է ազգայնամոլութիւն, հիւանդութիւն մը, որով Ա. Աշխարհամարտի ընթացքին կը տառապէին թուրքիան եւ Գերմանիան: Այդ ժանտախտը ինչպէս երէկ, այնպէս ալ այսօր եւ վաղը տարբեր երկիրներու մէջ գլուխ պիտի բարձրացնէ եւ ատելութիւն կոչուած երախով պիտի կլլէ երկիրներ ու ժողովուրդներ...»

Բայց Հայաստան երկիրը կայ, երկիրը կ'ապրի, ու երկիրը կը յիշէ իր բնիկները»:

Սիրելի ընթերցող, այս յօդուածաշարքի ամբողջ ընթացքին դուն պիտի հանդիպիս անուններու, որոնց հանձարեղ ներկայութիւնը առնաձևակի մեկնաբանութեան կարիք պիտի չունենայ: Այլ պարագաներու մեր կողմէ փոքրիկ ծանօթագրութիւններ կը տրուին անոնց կեանքի եւ գործունէութեան մասին:



ննջարաններուն մէջ, ժպիտը դէմքերուն կը պատրաստուին քուն մտնել՝ վերջիւ իրենց նոր անցուցած հրաշալի երեկոն:

Հիմա գանք հոն, թէ որո՞նք կը կառավարեն թուրքիան, ի՞նչ ուժեր, արդեօ՞ք Կ. Պոլսոյ մէջ, որ ամէն պարագայի աւելի կը թեւալ է,


### ՎԿԱՅՈՂ ԵԱՆ ՌԱՅՆԻՍՆ Է

Եան Ռայնիսը (1865 - 1929) լաթվիացի ամէնէն նշանաւոր բանաստեղծներէն է: Ան միշտ իւրապատուկ հետաքրքրութիւն ցուցաբերած է հայ ժողովուրդի պատմութեան, մշակոյթի եւ գրականութեան հանդէպ: Ան Հայաստանի եւ հայ գրականութեան նուիրուած ծաւալուն ուսումնասիրութիւններ գրած է, որոնց իր օժանդակութիւնը բերած է տաժանավայրի իր հայ ընկերը, սոցիալ-դեմոկրատ Աշոտ Խումարեանը: Ռայնիսը լաթվիերէնի թարգմանած եւ հրատարակած է «Վահագնի ծնունդը», «Կռունկը» եւ եօթը պանդխտութեան այլ երգեր:

«...Մեզ՝ լաթվիներս, - գրած է ան, - բախտը չէ շփացուցած բնաւ: Թիւով փոքր ժողովուրդ ենք եւ բնականաբար կը համակրինք միւս փոքր ժողովուրդներուն: Իմ մէջս Հայաստանի նկատմամբ ունեցած նախկին համակրանքս արթնացաւ, երբ յիշեցի ազնուագոյն հայ ընկերս, որուն հետ քանի մը տարի անցուցած եմ Ռուսիոյ հեռաւոր քարտավայրերուն մէջ:

Հայաստանի մեծագոյն դժբախտութիւններուն պատճառը այն է, որ ան Ասիոյ եւ Եւրոպայի ժողովուրդներուն միջեւ դարպասապահ է, տարանցիկ երկիր, որուն վրային իրարու ետեւէ ժողովուրդներ կ'անցնին, իսկ հայերը իրենց դարպասի բանալին ուրիշին չեն ուզեր տալ: Անոնք կ'ուզեն ոչ թէ անցուղի, այլ գիտակից միջնորդ ըլլալ: Հայերը ինքնուրոյն ժողովուրդ կ'ուզեն մնալ իրենց լեզուով ու հոգիով»: «Հայկական հարց գոյութիւն չունի, բայց մենք կը ստեղծենք», 1890-ին ֆրանսայի դեսպան Քամպլըրը ըսած է թուրքական կառավարութեան: Յաւօք այդ կանխագուշակումը աւելի կանուխ իրականացաւ, քան կարելի էր ենթադրել: Դեռեւս 1894-ին Քամպլըրը կառավարութեան գրած է. «Հայկական հարցը արդէն ստեղծուած է: Գրեթէ տարի մըն է, որ Հայաստան եւ իր մերձակայ նահանգները կարեւոր իրադարձութիւններու թատերաբեմ են: Այսպիսով հայկական հարցը կրկին բարձրացուցաւ: Ինչպէ՞ս պիտի ըլլայ անոր լուծումը: Մուլթանին խոստացած բարեփոխումները առասպել են միայն: Նախքան թուրքիոյ մէջ կատարելը, հոն ամէն բան պէտք է հիմնադրական փոխուի»:

Այս արխիւային փաստաթուղթը կը վկայէ այն մասին, որ թէ՛ ֆրանսական, թէ՛ արեւմտեան միւս տէրութիւնները քաջատեղեակ էին նախապատրաստուող մեծ ողբերգութեան, որուն մասին կը զգուշացնէր իրենց իսկ երկրին դեսպանը: «Պատմութիւնը տեսած չէ, - կը շարունակէ Ռայնիս, - աւելին, չարագործութիւններէն արիւնաքամ մեր տիտուր մոլորակը հագիւթէ տեսած ըլլայ այնպիսի սարսափելի տեսարաններ, որպիսիք տեղի ունեցան Հայաստան Աշխարհի մէջ 1895-96 թուականներուն: 1896-ի օգոստոսեան սպանդը սեւ բիծ է Եւրոպայի վրայ եւ դժուար է չհամաձայնիլ փորձեսէօր Քոմարովաքիին հետ, որ կ'ըսէր թէ՛ «Թուրքիոյ գոյութիւնը անարգանք է բոլոր քրիստոնեայ ժողովուրդներուն համար: «Խաղաղիւր ջարդարարը», ինչպէս սուլթանին կ'ան-



ուանէր Կլաուսթոն, բնաւ չէր խորշեր չարմար իրադրութիւնը օգտագործելէ յօգուտ իր նուաստ շահերուն: Այնուամենայնիւ, հայ ժողովուրդին տառապանքները այդ արհաւիրքներով չաւարտեցան. եկաւ համաշխարհային պատերազմը՝ հայկական նոր ջարդերը: Հայերուն բնաջնջումը կը կատարուէր ըստ նախօրօք մշակուած ծրագրի, որովհետեւ գերագոյն իշխանութիւնը գերմանական «պարտաճանաչ» գորավարներու ձեռքն էր: Այս բնաջնջումը հայ ժողովուրդէն մէկ ու կէս միլիոն ներկայացուցիչ խլեց: Ասիկա շատ թարմ է յիշողութեան մէջ, որ կարելի ըլլայ մոռնալ այդ արհաւիրքը:

Հայերու չարչարանաց պատմութիւնը այս խօսքերով կ'ուզենք աւարտել. - Հաւատարմ չէ ժողովուրդի հոգեկան ուժին ու կենսունակութեան, մենք կասկած չունինք, որ այդ բազմաչար ժողովուրդին տառապանքը վերջ կը գտնէ շուտով: Ապացոյցը հայ գրականութիւնն է, որ համատարած ու անընդմէջ օրհնեց է, դիւցազնավէպ: Հայկական պատարագը ամբողջութեամբ ողբերգութիւն է. հոգեւոր ծէսը կատարողը գլխաբաց, բոկոտն, ձեռքը երկարած կեցած է ծաղկազարդ ու ոսկեզօծ խորանին առջեւ: Անոր հայեացքը ճշմարտութեան ու գեղեցկութեան աղբիւրին ձգտող տառապած մարդկութեան խորհրդանիշն է: Այն մարդիկ, որոնք պատարագներու ներկայ եղած են Հռոմի մէջ, միաբերան կրնան հաւաստել, թէ հայկական պատարագը ամենահինը ըլլալով, նաեւ ամէնէն հանդիսաւորն է: Ատոր վկայութիւնը Ներսէս Շնորհալիին անմահ քերթողութիւնն է: Անոր հոգեւոր քերթուածները քաղցր են, նրբակերտ, յատակ ու փայլուն, երեւակայութիւնը ջերմ է ու ծաղկազարդ, ինչպէս արեւելեան ժողովուրդներունը, բայց լեցուն է հոգեբանական սուր վերլուծութեամբ ու խորունկ զգացումներով, որոնց նմանը միայն աւելի ուշ դարերու իտալական ու ֆլամանական միսթիք բանաստեղծութեան մէջ կարելի է գտնել:

Յ.Գ. Սիրելի ընթերցող, ատոնք անշուշտ հատուածական մէջբերումներ են եւ մենք չենք նպատակադրած ամբողջապէս ներկայացնել տարբեր հեղինակներու կամ քաղաքական գործիչներու գրառումները, սակայն կը կարծենք, թէ այսքանով ալ կարելի եղաւ որոշակի կարծիք ստեղծել ռուս եւ լաթվիացի մեծ գրողներու համոզումներուն մասին:

### ՎԿԱՅՈՂ ՏՈՍԹՈՒԵԻՍԷՆ Է

«Թուրքիան ոչ թէ օրինաւոր պետութիւն, այլ յանցաւոր կազմաւորում է: Թուրքը քաջ է ոչխարին մօտ, իսկ քաջին մօտ՝ ոչխար է: Պատերազմը միշտ չէ, որ պատուհաս է, այն երբեմն նաեւ փրկութիւն է: Ես՝ ռուսս, ինքզինքս կը գոհաբերեմ յանուն սլաւոնի, որ կը կռուի թուրքին դէմ. անոր կը մաղթեմ յաղթանակ, ոչ թէ որովհետեւ թուրքը մուսուլման է, այլ անոր համար, որ ան բոլորը կը մորթէ:

Վերջերս կարդացի, որ պաշտպոնները երկու հոգեւորական խաչ հանած են: Անոնք մէկ օր յետոյ մահացած են, գարհուրելի, երեւակայութենէ անդին տանջանքներէ ետք: Մեծ իշխանութիւնները անշուշտ ամէն բան գիտեն, սակայն, անոնք իրենցմէ կը վանեն, կը հեռացնեն այդ «պարագ», «չնչին», նոյնիսկ «աղոտոտ» պատկերները: Օր մը սակայն, այդ սեւ, կծկտած դիւանները ամենամասնական մէկ պահուն կրնան ներխուժել մեր իշխանաւորներուն գլուխը, գուցէ այն պահուն, երբ անոնք իրենց ճոխ

### ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՅԱՌԱՋԱՑՆԷ ԳՉՕՐՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄ

Երաժշտութիւնը կարեւոր եւ հետաքրքրական դեր ունի մեր կեանքին մէջ: Տիրութեան, ուրախութեան, ձանձրոյթի, հաճոյքի, ճնշուածութեան եւ հետաքրքրութեան ժամանակ երաժշտութիւնը կ'ուղեկցի մեզի եւ իւրաքանչիւրին պարագային ունի իր յատուկ դերը: Երաժշտութեան հաճոյքը վերապահուած չէ միայն չափահասներուն, փոքրերը եւս ունին նախընտրութիւններ երաժշտութեան մէջ եւ անոնք նոյնքան հաճոյք կրնան ստանալ երաժշտութենէն որքան չափահասները:

Social Psychological and Personality Science ամսաթերթը անդրադարձած է վերջերս կատարուած ամերիկեան ուսումնասիրութեան մը, որ ցոյց կու տայ թէ ինչպէս երաժշտութիւնը կրնայ մարդուն տալ հզօրութեան զգացում: Այս ուսումնասիրութիւնը կատարուած է Նորթուեյքսթըրն համալսարանի կողմէ, որ կը գտնուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու Իվանսթոն շրջանին մէջ:

Ուսումնասիրութեան հեղինակները յայտնած են թէ իրենց ուսումնասիրութեան ներշնչումի աղբիւրը եղած են մարզական խաղերը, ինչպէս Ողիմպիականները եւ Աշխարհի Ֆութպոլի Ախոյեանութեան մրցաշարքերը, ուր մարզիկները նախքան մարզադաշտ մուտք գործելը կ'ունկնդրեն իրենց նախասիրած երաժշտութիւնը: Ըստ փորձագէտներուն, մարզիկները ընդհանրապէս խորասուզուած կ'ըլլան իրենց նախասիրած երաժշտութեան մէջ եւ այս երեւոյթը բաւական ներշնչելի է: Երաժշտութեան օգուտներուն գծով նախապէս կատարուած ուսումնասիրութիւններ ցոյց տուած են թէ երաժշտութիւնը կրնայ բարելաւել յիշողութիւնը, մեղմացնել ֆիզիքական ցաւերը եւ քաջալերել անհատը, որպէսզի իրագործէ իր փափաքները:

Սակայն Նորթուեյքսթըրն համալսարանի հետազոտական խումբը առաջինն է, որ փորձ մը կատարած է յայտնաբերելու երաժշտութեան եւ հզօրութեան զգացումին միջեւ կապը:

Հետազոտները իրենց այս ենթադրութիւնը փորձաքննելու համար ընտրած են 31 տարեբեր սեռերու երգեր (ռոք, հիփ-հոփ, ձագ, դասական երաժշտութիւն, եւայլն), որոնցմէ իւրաքանչիւրէն երեսուն երկվայրկեան տեւողութեամբ հատուած մը պիտի ունկնդրէին փոր-

ձարկումի մասնակիցները: Մասնակիցները այս երաժշտութիւնները ունկնդրելէ ետք պիտի արձանագրէին ամէնէն շատ հզօրութեան զգացում ներշնչող երաժշտութիւններու անունները: Ի դէպ, հետազոտները ընտրած ցուցակին պատկանող ամէնէն շատ հզօրութեան զգացում ներշնչող երգն էր՝ Queen-ի նշանաւոր We Will Rock You եւ 2 Unlimited-ի Get Ready For This երգը: Իսկ հզօրութեան գծով ամէնէն նուազ ազդեցիկ երգերն էին՝ Fatboy Slim-ի Because We Can երգը եւ Baha Men-ի Who Let The Dogs Out-ը:

Ամերիկացի հետազոտները շարունակեցին իրենց ուսումնասիրութիւնը կատարելով երկրորդ փորձարկում մը, որուն ընթացքին անոնք քննեցին մասնակիցներու հզօրութեան զգացումի բնոյթը՝ նախապէս ընտրուած ամէնէն ազդեցիկ երգերու ունկնդրութեան պարագային:

Հոգեբանութեան մէջ, հզօրութիւնը ունի երեք հիմնական վարմունքային հետեւանքներ, որոնք յայտնի կը դառնան երբ անհատը հզօր զգայ: Հզօրութեան հետեւանքներէն են՝ վերացական (abstract) մտածումները, բացարձակ կառավարելու կարողութեան զգացումը կամ խաբկանքը եւ մրցակից միջավայրի մէջ նախաձեռնութիւններ կատարելու փափաքը: Փորձարկումի ընթացքին մասնակիցները կատարեցին զանազան աշխատանքներ, որոնց միջոցով փորձագէտները քննեցին հզօրութեան երեք բաղադրիչները անոնց մօտ:

Փորձարկումներուն արդիւնքները ցոյց տուին թէ ամէնէն ազդեցիկ երգերը մասնակիցներուն մօտ յառաջացուցին հզօրութեան զգացում: Մասնակիցները ցուցաբերեցին հզօրութեան երեք վարմունքային հետեւանքները: Հետաքրքրական է, որ երգերուն բառերը չեն որ մասնակիցները կը ներշնչեն հզօրութեան զգացումով, որովհետեւ երգի բառերուն ունկնդրութիւնը ոչ մէկ զգացում արթնցուցած է անոնց մօտ:

Այս ուսումնասիրութիւնը նաեւ ցոյց տուաւ թէ ամէնէն շատ հզօրութեան զգացում ներշնչող երաժշտութիւնները կը պարունակեն թաւձայն, որ կը կոչուի bass: Փորձարկումի ընթացքին թաւձայնով երաժշտութեան ենթարկուող մասնակիցները ամէնէն շատ ցուցաբերեցին հզօրութեան վարմունքներ:

### ՍԱՐՄՆԻ ԿՇԻՌՔԻ ՆՈՒԱԶԵՑՈՒՄԸ ԱՌՆՉՈՒԱԾ ՉԷ ԵՐՁԱՆԿՈՒԹԵԱՆ ԴԵՏ

Մարմնի կշիռքի նուազեցումը եւ հետեւաբար մարմնի բարեձեւութիւնը անկասկած կը նպաստեն ֆիզիքական առողջութեան: Սակայն արդեօ՞ք նաեւ կը նպաստեն հոգեկան առողջութեան: Միացեալ Թագաւորութեան մէջ կատարուած նոր ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ հակառակ ընդհանրացած ենթադրութեան՝ մարմնի կշիռքի նուազեցումը կրնայ աւելի առնչուած ըլլալ տիրութեան քան՝ երջանկութեան հետ:

Այս եզրակացութեան հասնելու համար հետազոտները ուսումնասիրած են մօտաւորապէս երկու հազար չափազանց գէր անձերու պարագաները: Ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց տուին թէ չորս տարուան ընթացքին իրենց մարմնի կշիռքին մօտաւորապէս հինգ առ հարիւր կորսնցնող անձերուն մօտ բարելաւուած է ֆիզիքական առողջութիւնը: Սակայն այս անհատները միւս մասնակիցներէն աւելի ցուցաբերած են ընկճուածութեան ախտանշաններ:

Մարմնի կշիռքի ծիրին մէջ նախապէս կատարուած ուսումնասիրութիւններ ցոյց տուած են թէ կշիռքի նուազեցումը կրնայ բարձ-

րացնել անձին տրամադրութիւնը, սակայն ըստ բրիտա նացի գիտնականներուն տրամադրութեան բարձրացումի ուղղակի պատճառը կրնայ ըլլալ անձին ընկերային միջավայրը, որ յաճախ քաջալերական կ'ըլլ լայ երբ անհատ մը ջանայ փոփոխութիւն կատարել:

Ի դէպ, 1979 մասնակիցներէն 278-ն այսինքն՝ 14 առ հարիւրը, չորս տարուան ընթացքին միջին հաշուով նիհարցան 15 փառնատով: Այս մասնակիցներուն մօտ 52 առ հարիւր համեմատութեամբ աւելի հաւանական էին ընկճուածութեան ախտանշանները:

Հետազոտութեան հեղինակներէն՝ Սառա ձէքսըն կ'ըսէ թէ՝ ան չ'ուզեր, որ իր հետազոտութիւնը յուսահատութիւն պատճառէ մարդոց: Ան կը շեշտէ, որ չափազանց գէրերու պարագային անհրաժեշտ է նիհարալը, որովհետեւ միայն այդ ձեւով է, որ անոնք կրնան վերականգնել իրենց ֆիզիքական առողջութիւնը: Սակայն, ան կ'աւելցնէ, որ իրապաշտ չէ ակնկալել, որ մարմնի կշիռքի նուազեցումը կրնայ դրական ազդեցութիւն ունենալ կեանքի բոլոր մարգերուն մէջ:

### ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՄՕՏ ԱԼՔՈՒԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԸ

Մոլութիւնը մաս կը կազմէ հոգեբանական խանգարումներու շարքին եւ ունի տարբեր բաժանումներ: Օրինակ, մարդիկ կրնան մոլի ըլլալ ալքոլի, թմրեցուցիչի, սեռային յարաբերութեան, բախտախաղերու, եւայլն: Ինչպէս բոլոր այլ հոգեբանական խանգարումներու պարագաները, մոլութեան պարագան եւս կը կարօտի զանազան գործօններու, որպէսզի անհանգստութիւնը յայտնի ըլլայ:

Ընդհանրապէս ընկճուածութիւնը (depression) եւ անձկութիւնը (anxiety) առնչուած են ալքոլի մոլութեան հետ՝ յատկապէս պատանիներու եւ պարմանուհիներու մօտ: Այլ խօսքով, այս երկուքը հոգեբանական գործօններ են, որոնք կրնան անհատը առաջնորդել մոլութեան: Այլ գործօններ կրնան ըլլալ ծինային (genetic), ընկերային (social) կամ կենսաբանական (biological):

Այս ծիրին մէջ Ֆինլանտայի մէջ կատարուած ուսումնասիրութեան մը շնորհիւ գիտնականներ յայտնաբերած են թէ ընկճուածութիւնը կամ աճնկութիւնը հիմնական գործօններ չեն պատանիներու մօտ ալքոլի մոլութեան: Այս երկուքին փոխարէն, գիտնականներու համաձայն՝ վայրագութիւնն է, որ կրնայ պատանի-պարմանուհիները առաջնորդել ալքոլի չարաչահումին եւ մոլութեան: Հետա-

զօտները նաեւ յայտնաբերեցին թէ վայրագութեան կողքին կարգ մը ընկերային գործօններ եւս կրնան նպաստել այս հոգեկան խանգարումին: Ուսումնասիրութեան շնորհիւ յայտնաբերուած գործօններն են՝ ծնողներու ամուսնալուծումը եւ վաղաժամ սեռական հասունութիւնը:

Հետաքրքրական է, որ պարմանուհիներու մօտ վայրագութիւնն ու ալքոլի մոլութիւնը աւելի հաւանական է քան պատանիներու մօտ: Իսկ տղամարդոց պարագային, ուշադրութեան հետ կապուած հարցերը եւ ծխախոտի մոլութիւնը առնչուած են ալքոլի մոլութեան հետ:

Այս ուսումնասիրութեան մաս կազմած են աւելի քան չորս հազար ֆինլանտացիներ՝ 13-էն 18 տարեկան: Իսկ ուսումնասիրութեան արդիւնքները հրատարակուած են Journal of Adolescence ամսաթերթին մէջ: Մասնակիցներուն 60 առ հարիւր համեմատութիւնը խոստովանած է թէ ալքոլ կ'օգտագործէ, իսկ 15 տարեկան պատանիներու եւ պարմանուհիներու մօտաւորապէս կէսը կ'օգտագործէ ալքոլ: Այս ուսումնասիրութիւնը կատարուած է Արեւելեան ֆինլանտայի Համալսարանի, Քուօբիտ Համալսարանի Հիւանդանոցին, Թամփիլը Համալսարանի եւ Pajjat-Hame կեդրոնական Հիւանդանոցի համագործակցութեամբ:

կեանքի գոհունակութիւնը:

Այս ուսումնասիրութիւնը կատարուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու Օհայօ շրջանին մէջ գտնուող University of Cincinnati համալսարանի հետազոտական խումբին կողմէ:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՁԵԱՆ

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԻՆ ԳԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԸՆԴՄԻՋՈՒՄՆԵՐԸ

Ըստ վերջերս կատարուած հետազոտութեան մը, աշխատանքային օրերուն ընդմիջումի ընթացքին համացանցով զբաղելը կրնայ բարձրացնել մարդոց աշխատանքային արդիւնաւէտութիւնը եւ արդիւնաբերութեան մակարդակը: Նախապէս, մասնագէտները համոզուած էին, որ համացանցը եւ ընկերային կայքերը կը շեղեն անհատին կեդրոնացումը եւ հետեւաբար կրնան ազդել անոր աշխատանքային արդիւնաւէտութեան վրայ:

Աշխատանքային արդիւնաւէտութեան ծիրին մէջ կատարուած հետազոտութիւնները ընդհանրապէս կեդրոնացած են սուրճի կամ ճաշի ընդմիջումներուն վրայ եւ

ցոյց տուած են թէ որքան օգտագար եւ նպաստաւոր են այս դադարները՝ անհատին աշխատանքային կեանքին մէջ:

Ըստ ուսումնասիրութեան հեղինակներուն, մարդիկ ընդհանրապէս համացանցային ընդմիջումի կը դիմեն երբ թէ՛ ֆիզիքապէս եւ թէ՛ հոգեպէս ուժաթափ զգան: Անոնք նաեւ կը դիմեն ընդմիջումի որպէսզի մեղմացնեն իրենց ճանձրոյթը եւ աշխատանքի միօրինակութիւնը:

Հետաքրքրական է, որ համացանցային ընդմիջումները նպաստաւոր չեն գրասենեակի մէջ համակարգիչով աշխատող անձերուն համար: Անոնք ամէնէն շատ օգտակար են այն աշխատանքներուն



### Ո՞Ր Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԳԱԻՃՄԱՆ ՈՒՂԻՆ

Շարունակում էք 7-էն

ներն ալ ներքին շուկայի մէջ արտադրող ապրանքներու գիններուն կրնայ համեմատաբար մօտենալ, այսպէսով սղահը ձեռով մը կը նուազի եւ բոլոր ապրանքներու գինները մատչելի կը դառնան, ֆապրիքաներու կառուցման համար ֆինանսական աղբիւրներ բազմաթիւ են: Իսկ եթէ մի քանի տարի անց պետութիւնը ուզէ գտարանի բեռն ազատուիլ, գայն կրնայ ծախել, որոնք յարմար գիններ կը ներկայացնեն կառավարութեան:

Այս տեսակի քայլեր առիթ կու տայ նաեւ սփիւռեքահայ դրամազլիին Հայաստան աշխարհ առատօրէն մոտեց գործելը: Այս ծրագրի մշակումը նաեւ վերջ կը դնէ Բանդուրանի գմի Երազներուն եւ Սիւնիքի մէջ գտնուող քաղաքներ շուտով կը զարգանան թէ տնտեսապէս եւ թէ բնակչութեամբ:

Այսօր անյապահ ավարտել պէտք է թրանս Արմէնիա մայր ուղին որ մեր ջանքերով աշխարհը պիտի կապէ կարմիր ծովէն Սեւ ծով այս ճանապարհը մեզ առիթ պիտի տայ որ մենք թէ տնտեսական եւ թէ քաղաքական ուժ ունենաք համաշխարհային գետնի վրայ, այս ճանապարհի անմիջական կառուցումով:

Այս երկու կարեւոր հարցերը պետութեան կողմէ լուծուին կը կարծեմ որ հզօր Հայաստանի հիմքը դրուած կ'ըլլայ: Ինչպէս չիշեցինք գտարանէն, նայիլիտ ֆապրիքայի մէջ գործածութեան համար ինքնաշարժներու անիւներու հում նիւթը «ուսպըրը օգտագործելով անիւներու լաստիքների արտադրումը կրնանք ապահովել եւ այսպէս ֆապրիքան աշխատանքի կը լծուի: Միւս կողմէ ազդիլիքը օգտագործելով կրնանք ներկի ֆապրիքա մը եւ բամբակի եւ բուրդի խառնելով նաեւ կ'օգտագործենք կերպասի մէջ, ներկն ալ կը գործածենք շինարարութեան մէջ: Իսկ եթէ կարողանանք 10 տարուան ընթացքին գտարանէն ձեռք ձգուած բոլոր նիւթերը արժեւորելով գանազան գործարաններ եւ եւ գործատեղիներ բանալու առիթը կը ստեղծենք այսպիսով Հայաստանի անգործութիւնը 80% չափանիշով կը կրճատենք, աշխատանք կ'ունենան այսօրուան անգործներու մեծամասնութիւնը: Աւելին յաջորդական կառուցելիք գործարաններու ֆինանսաւորումն ալ կրնանք ապահովել այս բանող ֆապրիքաներու շնորհիւ:

Այս իրագործումներու կողքին նաեւ պէտք է հիմնել Կիւմրիի մէջ գիտնութեամբ գէնքերու վերաբերեալ ֆապրիքաներ, կամ թէ առաջով բանողները ընդարձակել բանուողներու քանակը բազմացնելու համար, Ռուսաստանը այս ուղղութեամբ ստորագրած է համաձայնագիր մը այսօրուան կառավարութեան հետ անշուշտ իր ֆինանսական մասնակցութիւնը բերելով: Կիւմրիի մարդկանց անգործութիւնը այս տեսակի աշխատատեղիներու բացումով մասամբ պիտի նուազի, նաեւ դեռ կան անմշակ հողային մեծ տարածութիւններ օրինակ Սարտարապատի դաշտը որոնք ձեռնտու են բամբակի մշակման: Բամբակի արտադրութեամբ կարելի պիտի ըլլայ արտադրել կերպասներ, որոնցմով ձեռք կը ձգենք շապիկ, ներքնաշապիկ եւ այլն: Իսկ վանաձորը կրնանք քիմիագործութեան կեդրոն դարձնել իր

ձեռնտու գործարաններու միջոցաւ, նաեւ աւելցնելով մի քանի նոր գործարաններ:

Հայաստանի լրագիրներու թուղթը Գորիսի մէջ կառուցելիք թուղթի ֆապրիքա մը հիմնելով կրնանք տեղական միջոցներով թուղթը ձեռք ձգել, այս ֆապրիքայի արտադրութեամբ տարեկան առևտուազն 10 միլիոն Ա. Տ. կը խնայենք եւ այս ձեռքբերումով կ'օգնեն մեր թոշակառու մարդկանց ամսականներու յաւելման:

Շինարարութեան մէջ հաճելի պակաս ունինք, գայն կարելի է նուազագոյնի իջեցնել ներքին ատաղձագործութիւնը Արցախի մէջ զարգացնելով եւ բլաստիքը օգտագործելով, նաեւ Երեւանի մէջ այժմ բանող ապակիի ֆապրիքան ընդլայնելով որ պատուհաններու ապակիները հայթայթել, գալով բլաստիքի կրնանք նաեւ տնային պիտոցներու եւ շինարարութեան մէջ դուռներու եւ պատուհաններու շրջագործեր: Հայաստանը կրնայ նաեւ «Automotive» արտադրելու գործարաններ վերաբանալ կամ կառուցել նորերը, պէտք է սկսիլ «Armen-Lada» «բօր մեքենաներու շինարարութեամբ Չարենցաւանի մէջ գտնուող մեծագոյն բրէսի գործածութեամբ եւ պէտք է մոռնալ շրջանի մէջ գտնուող երկաթի հանքերու գոյութիւնը, որ իբր հում նիւթ պիտի ծառայէ մեքենաշինութեան:

Մենք կրնանք նաեւ գիւղատնտեսական արտադրանքները շաղկապել թեթեւ արդիւնաբերութեան զարգացման հետ, ինչպէս օրինակ բամբակը, ծխախոտը, շաքարի բանձարը եւ այլն: Այսօր այդ երկուքի նուազանք մը կարող ենք սիկարէթ եւ շաքարաւազ ձեռք ձգել, բայց լեռնային կարգ մը տարածքներ առաջով չեն օգտագործուիլ, եթէ գանոնք սանդուխտ առ սանդուխտ վերածենք, կրնանք շաքարի բանձար ցանելով աւելի մեծ քանակութեամբ շաքարաւազ ձեռք բերել:

Եթէ դատարկ մեծ ֆապրիքայի շէնքեր, գոյութիւն ունին կրնանք օգտագործել կերպասի դերձանի եւ կերպասաշինութեան համար, այս բոլորը կառուցանել վիթխարի ֆինանսական միջոցառումներու անհրաժեշտ չեն, ասոնք ամէն տարի մաս առ մաս շրջաններու մէջ աւելցնել կամ եղածները ընդլայնել, նպատակ ունենալով 5 տարուայ ընթացքին արտադրումի աւելցումով արտածումը իրագործել:

Այժմ իր ցանկի վրայ կան 25 տեսակ ապրանք արտադրուելիք գործարաններ, որոնց հում նիւթերը կրնանք ապահովել տեղական միջոցներով, անշուշտ այդ բոլորին մէջ անգամ ընդմիջտ կառուցումները կարելի չեն, բայց որքանով կրնանք շինել մեզ համար նպաստաւոր է:

Յարատեւ աշխատանքով 5 տարիէն բոլոր պարտքերը մարելու հնարաւորութիւնը կ'ունենանք, բարեկամ պետութիւններու մեր արտադրած ապրանքները ծախելով: Տնտեսական այս ծրագիրը իրականացնելով նաեւ կարելի կ'ըլլայ ներքին շուկայի գիններու աճը հաւասարակշռել եւ զսպել, մինչ այդ կարելիութիւն կը ստեղծուի Սփիւռեքահայութեան վատահոլութիւնը շահելու: Պետական Պիւտձէն աւելցնելու եւ հաւասարակշռելու, անգործ մարդկանց գործ ապահովելով ժողովուրդի կենսական մակարդակը բարձրացնելու: Այս պայմանները մեզի

կ'ապահովեն շատ մեծ առաւելութիւններ մեր տարածաշրջանում:

Հայաստանը իր արտահանման (export) ցուցանիշը եթէ 50% տոկոս համեմատութեամբ աւելցնէ, համաշխարհային գետնի վրայ մեր տնտեսական եւ քաղաքական վարկն ալ կը բարձրանայ, նաեւ առիթը կը ստեղծուի յետագայ տնտեսական ծրագիրներու շատ արագ իրագործման: Եթէ այս տարի սկսինք այս ծրագրի իրականացման՝ 10 տարուան ընթացքին տնտեսապէս շատ ուժեղ կ'ըլլանք եւ շատ աւելի ամուր կերպով կը կանգնինք մեր դարաւոր թշնամուն դիմաց, անոնք միշտ փորձած են ամէն ձեռով կացինահարել մեզ եւ ուզած են միշտ նեղ դրութեան մատնել, նոյնիսկ 20 եւ աւելի տարիներէ ի վեր կիրարկուած շրջափակումը փշրուած կ'ըլլայ:

Եթէ ծրագրի հարցերը լուծում ստանան 10 տարուան մէջ Հայաստանի բնակչութեան թիւն ալ զգալիօրէն կ'աճի ներառեալ ներգաղթով: Ամենէն կարեւորը այն է որ օրուան կառավարութիւնները կը գործեն ըլլալով ինքնավստահ առանց կախեալ ըլլալու գերիշխան պետութիւններէ, եւ ամենէն կարեւորը արտաքին քաղաքականութեան մէջ աւելի գերիշխող վիճակ կ'ունենաք եւ մեզի չեն կրնար այլեւս ճնշել այլեւալ հարցերով, շատ աւելի յարմարաւէտ պայմաններ կը ստեղծուին հրատապ հարցերու լուծման համար, ու համաշխարհային օրէնքները կը բանին ի նպաստ Հայաստանի պետութեան:

### Հ.Մ.Ս.Ի ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԸ

Շարունակում էք 15-էն

Փօլ Շահինեան եւ Յարութ Կէօքկէօգեան իսկ երէցներէն Աւօ Խօրոէքեան: Արծուիկներու շարքերէն արեւուշական կարգերուն անցան Նաթալի Պաթահ, Մեղրի Մկրտիչեան եւ Նանի Իգմիրլեան: Պաշտօնի բարձրացման արժանացան եւ փոխառաջնորդուհիներ եղան Մելիսա եւ Վանեսա Հըլու, իսկ փոխառաջնորդներ եղան Նարեկ Արթինեան, Կարէն Կարապետեան, Յարութ Ասմինեան, Կարօ Պարախեան, որոնք ստացան նաեւ իրենց 2-րդ կարգի նշանակները: Իրենց կարգին, առաջնորդական պաշտօն ստանձնեցին Նարեկ Տէմիրճեան, Վազգէն Բարսեղեան, Մուրատ Կիրակոսեան, Յովիկ Կէօքկէօգեան, իսկ առաջնորդուհիներու՝ Սարին Չափութեան եւ Նայիրի Տէմիրճեան:

Արեւուշներէն Գրիսթին Շահինեան ստանձնեց վարիչ առաջնորդութեան պաշտօնը, իսկ սկառուական կարգերէն այս պաշտօնին արժանացան Ռաֆֆի Գալստեան, Ալպեռ Մուրալեան, Կարօ Շիրօ Յակոբեան եւ Սալիմ Սաստ:

Այս տարի փոխ խմբապետութեան պաշտօնի ուսնոցները արժանիօրէն յանձնուեցան Թինա Կարապետեանին:

Երդման եւ պաշտօնի բարձրացման արարողութիւններէն յետոյ տեղի ունեցաւ գնահատականներու եւ նշանակներու բաշխումը, որոնք նոյն քան կարեւոր են պատանիին կազմաւորման, քաջալերման եւ ոգեւորման համար, որպէսզի աւելի մեծ թափով շարունակէ իր սկառուական ուղին: Առ այդ՝ այս տարի տիպար արեւուշի տիտղոսին արժանացաւ Սթեֆանի Թազեան, իսկ լաւագոյն խմբակի տիտղոսին արժանացաւ սկառուական Վազր խմբակը:

Խարուկահանդէսի երկրորդ բաժինը մեկնարկեց խարոյկի հրա-

Ուստի այլեւս իրաւունք չունինք այս ճակատներու վրայ նահանջելու, անձնական հաշիւները նկատի առնելով, մեր բոլորին նպատակը պէտք է ըլլայ կառուցել հզօր Հայաստանը դարաւոր երազներու իրականացման համար, նկատի առնելով պետութեան եւ հայ ժողովուրդի ընդհանրական շահերը:

Մեր առջեւ լուծում սպասող երկու կարեւորագոյն հարցեր կան, որոնց համար պէտք է շատ արագ գործէ օրուան իշխանութիւնը: Առաջինը «Trans Armenia» ճանապարհաշինութիւնը, իսկ երկրորդը Բեթրոլի գտարանը, այս կառուցաները մեզ համար կենսական են առաջինը մեզ պիտի կապէ արտաքին աշխարհի հետ, իսկ երկրորդը աշխատատեղիներ ստեղծել եւ տնտեսութեան մեծածաւալ ծաղկումը պիտի ապահովէ:

Եթէ կան կարգ մը մարդիկ, որոնք կը խորհին թէ մեր նպատակը կացինահարել է իրենց պիղծեսը, ոչ այլ կասեցնել շուկայական անհեթեթ խաղերը, նաեւ տեղական առեւտրական օրէնքներու ալ ապահով դարձնել օտար ներդրումներ կատարողներուն: Այս ծրագիրներու շնորհիւ մեր երկիրը 70% չափով ինքնաբաւ կը դառնայ:

Ես ձեզ, հակիրճ ու ամփոփ տեղեկագիր մը ներկայացուցի, որովհետեւ Հայաստանի բոլոր մարզերը չէմ շրջած, լիակատար չեմ ուսումնասիրած, յառաջիկային եթէ առիթը ստեղծուի՝ ալ աւելի մանրամասն ծրագիր մը կրնանք պատրաստել:


վառութեամբ, որուն առաջին կայծը տալու պատիւը այս տարի տրուած էր նախկին ընդհանուր խմբապետ ընկեր Փօլ Մուրալեանին, որ իսկապէս արժանի էր այս պատիւին, նկատի առած որ մինչեւ օրս անաչառութեամբ եւ ամբողջական նուիրումով հոգատար հօր մը նման տակաւին կը հսկէ սկառուական խումբի աշխատանքներուն եւ գործունէութեան: Առ այդ՝ երէցական կազմի տղաքը հաստատ քայլերով, ջահը ի ձեռին, Մուրալեանը առաջորդեցին դէպի խարոյկի յատուկ վայրը, ուր վաստակաշատ ընկերը վառեց օրուան խարոյկը:

Խարուկահանդէսի երեկոյի երկրորդ հատուածը նուիրուած էր թատերական պատկերի մը՝ որուն միջոցաւ ներկաներուն ներկայացուցաւ ընտանեկան շատ հարազատ պատկեր մը, ուր ամուսնացեալ ամուր մը իրենց զաւկին կը պատմեն թէ ինչպէս ծանօթացած էին իրարու, սկառուական շարքերուն մէջ, ուր իրենք գեղեցիկ եւ ուրախ օրեր ապրած էին: Թատերական այս պատկերին ընկերակցեցան ամուրի կեանքի գանազան դրուագները մարմնաւորող թատերական արտայայտիչ գեղեցիկ ներկայացումներ՝ պար, երգ, դերասանութիւն, ցուցադրութիւն, սահիկներու ցուցադրութիւն, որոնք ամփոփեցին անհատի մը անցած հանգրուանները սկառուական կեանքին մէջ:

Խարուկահանդէսը իր աւարտին հասաւ, Հալպի Հ.Մ.Ս.ի սկառուական կազմի պատրաստած յատուկ երգով՝ մասնակցութեամբ խումբի բոլոր անդամներուն եւ խորհուրդի կազմին, ապա ընդհանուր շրջանակ մը կազմելով բոլորը ցտեսութիւն յայտնեցին իրենց ընկերներուն՝ «Հրաժեշտի երգ»ով, խոստանալով վերադառնալ ամենաշուտ ժամանակամիջոցին:

ՍՈՒՍԿ

### ՄԱՇԱԶԴ



**ՍԱՄՈՒԷԼ ՍԻՆԱՆԵԱՆ**  
(Ծնեալ 1947 թ. Հայաստան)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր եւ հարազատին՝ Սամուէլ Սինանեանի անակնկալ մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի 21 Օգոստոս, 2014ին:

Հանգուցեալի յուղարկաւորութեան տան կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի 28 Օգոստոս, երեկոյեան ժամը 7:00ին Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ, 1201 N. Vine Street: Իսկ եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 29 Օգոստոս, կէսօրէ առաջ ժամը 10:30ին նոյն եկեղեցւոյ մէջ, ապա թաղումը Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝

Զաւակները՝ Մանուկ եւ Արմինէ Սինանեան

Կէրի եւ Սիւզաննա Սինանեան

եւ համայն ազգականներն ու բարեկամները:

Թաղման արարողութենէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Կլենտէյլի Dream Palace սրահին մէջ 510 East Broadway, Glendale CA 91205:

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը, ինչպէս նաեւ Հայ Ամերիկեան Խորհուրդը իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն ընտանեկան պարագաներուն, մանաւորաբար իրենց անդամին Տէր եւ Տիկ. Կէրի եւ Սիւզաննա Սինանեանին:

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տիար Ալպէրթ Մինասեան իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս գաւակներուն՝ Տէր եւ Տիկին Մանուկ Սինանեանին, Տէր եւ Տիկին Կէրի Սինանեանին եւ ընտանիքներուն: Առ այդ կը նուիրէ 50 տոլար Մասիսին:

### ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՅԱՐՕ ԲՈՒՐՆԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կ'ըլլան «Մասիս»ին:

- Վարդուկ Բուրեան \$100
- Մինաս Հօբուրեան \$100
- Արփի Հօբուրեան \$100

### ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

Հոկտեմբեր 3, 2014

ՆՍՄՍ ԵՒ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱԾԻՒՂ

### Գրաւուած օր

Նոյեմբեր 15, 2014

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
60 Ամեակի Շքեղ հանդիսութիւն

## ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով

հեռաձայնել՝ (626) 398-0506

## ՌՈՊԵՐԹ ԱՄԻՐԻԱՆԵԱՆԻ «ԱՊՐԵԼՈՒ ՈՒԺԸ»

Շարունակուած էջ 14-էն

եւ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութիւնն այցելութիւնը իրագործելու: Շատ բան փոխուած էր իմ վերջին այցելութենէս ետք: Ես ալ կը նայէի ու կը դիտէի չորս կողմս տարբեր տեսադաշտով՝ եւ երեւի կեանքին շնորհած տարբեր փորձառութիւններով եւ հասունութեամբ: Թուժանեան եւ Աքովեան պողոտաներուն վրայ անպայման բարեկամի մը կրնաս հանդիպիլ, բայց մանաւանդ այս օրերուն, երբ բաւական մեծ թիւով հալչպահայ ծանօթներ ալ Հայաստան են: Հայերէն է չորս կողմը ու տակաւին՝ քրիստոնեայ...: Մեր միջին արեւելեան տարածաշրջանի վերջին իրադարձութիւններուն լոյսին տակ մանաւանդ այս իրականութիւնները «ապահովութիւններ» են...: Հանրապետութեան հրապարակի կեդրոնը իւրաքանչիւր երեկոյեան երաժշտական-Չուրերու այսպէս ըսած «մենահամերգները» գրաւիչ են, բայց նաեւ ինչքան կանաչ է Երեւանը...: Այցելութիւններ յաջորդեցին իրարու՝ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանին նախարարութեան աշխատանքային անձնակազմին, մշակութիւնի նախարար Յասմիկ Պօղոսեանին, Գարեգին Բ. Ամենայն հայոց վեհափառ հայրապետին, միջեկեղեցական յարաբերութիւններու բաժնի պատասխանատուին հետ: Ազգային թանգարան, Հայ աւետարանական եկեղեցի եւ Աւետարանական կեդրոն, Հայ կաթողիկէ եկեղեցի, «Սիւրիլիթաս», «Ազգ» շաբաթաթերթ, «Սփիւռք» գիտաուսումնասիրական կեդրոն, Ամերիկեան համալսարան, Յեղասպանութեան թանգարան, «Տար 12» եւ «Երկիր Մետրա» պատկերասփիւռի կայաններ, «Հայերն այսօր», Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տուն, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան կեդրոնատեղի, «Ոսկէ ծիրան» ֆիլմի փառատօն ու տակաւին...:

Պէտք էր այցելէի Արցախ, որպէսզի կարենայի վայելել եւ ըմբոշիւնել գեղեցիկ լեռներն ու բնութիւնը եւ հասկնալ, թէ ինչո՞ւ Ղարաբաղի Հանրապետութիւնը «Լեոնային» կոչուած է...: Պետական, քաղաքական ու ընկերային կառուցներու աստիճանական զարգացումով՝ Ղարաբաղի Հանրապետութիւնը կամաց-կամաց միջազգային ընտանիքին կը պարտադրէ իր ամբողջական եւ իրաւական ճանաչումը:

Բայց անհրաժեշտ էր զգալ եւ կիսել ժողովուրդի տրամադրութիւնը, եւ լաւ ձեւերէն մէկը հանրային ինքնաշարժներու վարորդներուն հետ զրոյցն է: Կայ շատ

արագ կերպով հաստատուած հատորականութիւն, ուր արդէն կեանքի փորձառութիւնը եւ պատմութիւնը կը կիսուի, եւ կը դառնաս բարեկամը Սուրիկին, Ռազմիկին, Գէորգին, Կարոյին եւ ուրիշներու: Մանազգիտութիւնները՝ լրագրող, ճարտարապետ, բանասէր ու տակաւին այլ...: Եթէ գործ չկայ, բայց կայ գործ ստեղծելու եւ առանց «ամչնալու աշխատանքի նետուելու եւ աշխատելու տրամադրութիւնը»: «Պիտի ապրինք»-ը եղած է կարգախօս, եւ կ'ուզեն ամէն զնով օրապահիկը ճարել...: «Հինգ տարի Կիպրոսն ապրեցայ», Սուրիկն է խօսողը, «հիմա վերադարձայ Երեւան եւ կ'ուզեմ հայրենիքիս մէջ աշխատիլ եւ ապրիլ: Տունս հոս է...»: Սուրիկը իր վարորդի աշխատանքին մէջ կը տեսնէ ու կը գտնէ իր «ապրելու ուժը»...:

Դժուարութիւններ նաեւ առկայ են մայր հայրենիքին մէջ...: Բայց ո՞ւր եւ ո՞ր երկրի մէջ այդպէս չէ...

Եւ այս դժուարութիւնները՝ իմա՛ մարտահրաւէրները՝ Հայաստանի մեծ ու համընդհանուր «համայնապատկերին» մէկ մասն են... Եւ հայրենի իրականութիւնը պէտք է դիտել այս մեծ ու համընդհանուր «համայնապատկեր»-ի պրիսմակէն՝ զայն պահելու եւ զօրակցելու տրամադրութեամբ...:

Լաւապէս դիտեցի այս «համայնապատկերը» հայրենի հողին վրան, բայց վերադարձայ այդ պահէն երկու շաբաթ առաջ մայրաքաղաքին հետ իմ հանդիպումիս, երբ ան դուրս կը հանէր «հոգին»՝ եւ նոյն այդ «հոգին» տուն տուող «ապրելու ուժը»: Հայրենի հողին վրայ ես ապրեցայ-վերապրեցայ «ապրող (ապրելու) այս ուժը», որ մեր ազգային-մշակութային պատմութեան տուած է զօրաւոր սլացք եւ հասուցած է մեզ մինչեւ օրս...:

Այսօրը այս է, հապա՞ վաղը...: Մայրաքաղաքն է դարձեալ...: «Այս ապրելու ուժով մենք կրնանք շարունակել մեր պատմութիւնը: Եւ այս պատմութիւնը մեզի համար սրբազան է, որովհետեւ մեր հայրենիքի երջանկութեան պատմութիւնն է...»:

«Ապրելու ուժը» եւ «հայրենիքի երջանկութեան պատմութիւնը»: Իրարմով եւ գիրար ամբողջացնող երկու անբաժանելի իրականութիւնները:

Ռուպերթ Ամիրխանեանի «ապրելու ուժը», նաեւ՝ իւրաքանչիւր հայու...: Եւ հայրենիքի «հոգիով» է, որ հայը իր «ապրելու ուժը» պիտի կերտէ: Բայց այս «ուժը» նաեւ պիտի ներարկէ կարողութիւն՝ շարունակելու համար «հայրենիքի երջանկութեան պատմութիւնը»:

### ՎԿԱՅՈՐԸ ՏՈՍԹՈՒՄԲԻՆ Է

Շարունակուած էջ 16-էն

քան մնացեալ թուրքիան, կը գտնուի թէկուզ մէկ թուրք, որ ներքին համոզումով ի վերջոյ քրիստոնեան կրնայ որպէս իրեն համահաւասար ընդունիլ: Ես կ'ըսեմ՝ «թէկուզ մէկ մարդ»... Եթէ այդպէս է, եթէ նոյնիսկ մէկ հատիկ մարդ չկայ, ապա ինչպէ՞ս կարելի է այսպիսի ժողովուրդի հետ բանակցութիւններ վարել եւ պայմանագրեր կնքել»:

Սիրելի ընթերցող, նկատել տանք, որ հանճարեղ Տոսթոեւս-

քին վախճանած է 1881-ին, երբ թուրքը դեռեւս չէր բացայայտած իր ամենէն վայրագ դէմքը: Մեծ գրողը իր մարգարէական կանխատեսումները աւելի առաջ ըրած է, քան Հայոց Յեղասպանութեան նենգ ծրագրին խմորումը: Թերեւս միայն հանճարներուն տրուած հեռատեսութեամբ ան կանխազգաց ապագայ արհաւիրքը եւ այդ է պատճառը, որ ան անխնայ կը մեղադրէ թուրքն ու թուրքին հետ բանակցող իր պետութեան պատասխանատուները:

# ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՄԷՆ ԲԱՆԷ ՎԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

ARMENIAN INDEPENDENCE DAY

# FESTIVAL Փառապանոց

Կազմակերպություն Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

## SUNDAY SEPTEMBER

### 21, 2014

## VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206  
Starting at 11:00 am

LIVE MUSIC  
DANCING  
ART WORK EXIBITION  
KIDS GAMES  
ARMENIAN FOOD

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ  
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ  
ԵՆ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ  
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ  
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ



To reserve your vendor booth  
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար  
Հեռաձայնեցեք Նոր Սերունդ Մշակութային Միության  
(818) 391-7938